



ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

այիս է՝ ամենագեղեցիկ ու սիրելի ամիսը: Ձուր չեն բանաստեղծները կարծում, որ արարչագործ Աստված այս ամսում ստեղծեց աշխարհը: Իր կյանքի ընթացքում ո՞վ երբևիցե չի փորձել այդ ամիս, պայծառ արևի շողերի ներքո դուրս գալ բնության գիրկ՝ դեպի գյուղի անջուրն պահապան լեռան լանջը: Ինչպիսի՜ սքանչելիքներ, ինչպիսի՜ բերկրամբ: Բնությունն արթնացել է իր բոլոր պերճանքներով ու զարդերով և տիեզերքի զարթոնքն է իրականացնում: Դաշտերն ու լեռներն իրենց երփներանգ գույներով, թռչուններն իրենց սքանչելի մեղեդիներով, բնության տեսարաններն ու պատկերներն իրենց աստվածային գեղեցկություններով հրճվում և ցնծում են:

...Սակայն որքան սարսափելի են դառնում մեր ուրախության թրթռումներն ու մեր մտքի պայծառ տեսարանները, երբ այդ իսկ պահին լեռան լանջից դիտում ենք մեր ոտքերի տակ փռված գերեզմանատունը, անձայն ու անխոս շիրիմների կույտերը, ավեր ու կիսավեր արձանները...

...Հազար անգամ օրինյալ լինի այն հավատն ու վարդապետությունը, որը հանկարծ օգնության է գալիս, բյուր անգամ ապրի այն հույսն ու շունչը, որն ապավեն է դառնում քո մենավոր անշարժության համար: «Ցավերի հովտից» մխիթարական ձայներ են հնչում՝ ավետելով, որ գերեզմանից անդին էլ կյանք կա, անմահություն կա:

...«Հարություն առնել»՝ նշանակում է վեր կենալ, բարձրանալ. դա այն է, երբ մեռած մարդը կենդանանում է կամ, առհասարակ, երբ անշարժության դատապարտված որևէ բան շարժում է դառնում և կյանք է ստանում. մարդիկ դուրս են պրծնում մահվան գրկից, ազատվում ու հարություն են առնում: Հարության այս խորհուրդն է հնչում տիեզերքի ծոցից ու երկրի խորքերից: «Քրիստոս յարեալ» ավետիսը երգվեց սրբազան կամարների ներքո: Եվ իսկապես, պատկերացնո՞ւմ եք արդյոք, թե որքան ծանր կլինեք, եթե սարսափի ու ահի թուպներից հետո Քրիստոս հարություն չառներ: Ի՞նչ կլինեք մեր վիճակը, եթե մեր գրկած, մեր փայփայած շիրմի վրա երկնային լույսն օգնու-

յան չգար... Մեր Տերը, սակայն, հարություն առավ: Աստվածային պարզկներից մեծագույնն ու ամենապանչելին՝ մեր կյանքը, երբեք ու երբեք արժեք և նշանակություն չէր ունենա, եթե «Քրիստոս հարություն առած չլիներ»: Եվ չեն ասում միայն այն, որ «իզուր կլինեք մեր քարոզությունը», այլ դեռ ավելին՝ «ընդունայն կլինեք նաև



ծեր հավատքը» (հմմտ. Ա Կորնթ. 15:14): Մեր այս մարմնի համար հարություն է սահմանված, իսկ հոգու համար՝ անմահություն. առաջին պարագան է, որ զբաղեցնում է մեր միտքը...

...Մի՞թե բավական չէ հիշել Հիսուսի դատարկ գերեզմանը՝ վստահ լինելու համար, որ մեր բոլոր սիրելի մեջքայալները զարթնելու և Նրա նմանողությամբ հարություն են առնելու: Թող որ մեզ համար հուշում լինեն Քրիստոսի այն խոսքերը, թե՝ «Նշա՞ն եք փնտրում, տեսե՛ք թաղման ու հարության նշանը» (հմմտ. Մատթ. 12:35):

...Մի՞թե Քրիստոսի հարությունը մարդկային հոգիների փառավոր պատկերը չէ, և կամ Նրանով չէ՞, որ հաստատվում է մարդու կոչման իսկությունը, և կամ Նրանով չէ՞ չի վերանում հոգևոր ու մարմնավոր կյանքի հակասությունը և, հետևաբար, հոգեպես ու մարմնապես դուրս ելնում մեռելային կարգավիճակից:

Ուրեմն, աներկյուղ և համարձակորեն ընթացեք կյանքի մռայլ հովտի միջով: Ձեր առջևով մռայլ ու խավարային ուրվականներ կանցնեն, սակայն դուք երբեք ու երբեք մի՛ վախեցեք. դրանք չեն կարող խոչընդոտել ձեր կյանքի ընթացքը: Դուք կյանքի այդ երկարածիգ ճանապարհի վեր-

ջում անմահության դռներ պիտի գտնեք, որոնց վրա ոչ թե մռայլության ու հուսահատության խորհրդանիշ մի բու է թառած լինելու, այլ Քրիստոսի հարության երկրացունց, երկինք զմայլեցնող լույսն է ծագելու:


Այս է ահա հարության հույսը, որը պիտի բոցավառի բոլոր քրիստոնյաների սրտերը: Հարության

այդ հիշատակությանն է ծառայում նաև յուրաքանչյուր կիրակի օրը:

Երկյուղած սրտեր ունեցողներ՝ և ջերմեռանդ քրիստոնյաներ, կարծում են, որ այսքան ժամանակահատվածը բավական է ոչ միայն ձեզ համոզելու, այլև զորացնելու և հիշեցնելու համար:

Ուրեմն, հավատացյալ եղբայրներ, զորացրե՛ք ձեր հոգիները, ամրացե՛ք և վերանորոգվեցե՛ք հարության կատարելությամբ: Իսկ դուք, թերահավատներ, որ սովոր եք աշխարհի կեղծ ու աղի աղբյուրներից լցնել ձեր սափորները, այսուհետև թող որ այդ սափորները լցվեն այն վճիտ և ակնապարար աղբյուրից, որի ակունքը ցուրծակում է «Քրիստոս հարություն առավ» սքանչելի բառերը, այն հարությունը, որն արտահայտելու համար անհրաժեշտ է երկնքի ու երկրի բովանդակ երաժշտությունը:

Մխիթարվեցե՛ք, ուրեմն, որդեկորույս հայրեր և մայրեր, քանի որ ձեր սիրասուն գավակները վեր են կենալու, և դուք տեսնելու եք ձեր սիրելիի դեմքը: Այն մատներն ու այն աներևակայելի ձեռքերը, որոնք փշրեցին երկաթե դռներն ու խորտակեցին քարե դարպասները, կփշրեն նաև ձեր բազմամյա հողաթմբերը, և դուք հողի փոխա-



պայծառությունը, բայց երբեք չի կարող մարել այն:

Հարության հավատն է մեր կյանքի հիմքն ու ապագայի երաշխիքը, ուստի և Եկեղեցու իմաստուն հայրերը, անծայրածիր շնորհներով լցված, յուրաքանչյուր տարվա այս ժամանակաշրջանը հաստատել են որպես հարության մասին մշտապես քարոզելու, լսելու և տոնախմբելու մի ժամանահատված: Հարության

րեն նրան կփարվեք ու նրան կհամբուրեք:

Այրիացած կին, լաց մի՛ եղիր այն անձի կորստյան պատճառով, որի պատկերն այդքան ջերմորեն սեղմել ես կրծքիդ: Որբեր, լաց մի՛ եղեք, դուք դեռ պիտի զգաք ձեր սիրասուն մայրիկների քաղցր ու անուշ համբույրները, և ձեր մատաղ սրտերը պիտի հովանան:

Եղբայրներ և քույրեր, անցան սգի ու լացի ժամանակները, այժմ

հարության տոնախմբության մեջ ենք և Փրկչի կենդանարար ճառագայթներով ենք ապրում ու զվարճանում:

Ով բաբախող սրտեր, դուք, որ այս պահին ձեր այրվող աչքերից արտասուքների շիթեր եք հեղում, տարեք այս մեծ ավետիսը, տարեք, իսկույն տարեք ու քարոզեցե՛ք վշտահար սգավորներին, որպեսզի սրբեն իրենց արտասուքները, քանի որ հարություն է ամենուր, ամեն կողմում:

Ամենուրեք ասացե՛ք, որ ձեր մեջքայալները հարություն են առնելու, բաց են անելու իրենց ծաված թևերը, փրկված վեր են կենալու և սավառնելու են արեգակի լույսի մեջ:

Օ՛, այդ լույսը տարե՛ք ու վառեցե՛ք այն հանգած օջախներում, որտեղ ճրագը վաղուց է, ինչ մարել է: Վառեցե՛ք այն սգավորի լապտերը, որը խաբիսափելով լալահառաչ քայլում է մահվան ստվերների հովտով:

Ամենքին հավաստիացրե՛ք, որ փողը պիտի հնչի, և կորած, անհետ կորած սիրելիները հարության պիտի առնեն ծովի անհատակ անդունդներից, արծվի որկորներից, առյուծի որովայնից, հողմերի ծալքերից: Պիտի կենդանանան ու պիտի տեսնեն երկնքի փառքը...

Ամենքին ասացե՛ք, որ Քրիստոս Ինքը մարդ է դարձել, և Նրա խաչով մարդն է խաչվում, Նրա մահվամբ մարդն է մեռնում և հարությանբ մարդն է հառնում: Ուրեմն, թող որ հեռանա, անհետ ու անդառնալիորեն թող հեռանա տարակուսանքի մոլեգին ոգին:

Այս ավետիսը տվե՛ք բոլոր դասակարգերին անխտիր, հաղորդե՛ք այն հարուստին և աղքատին, անտունին և ունևորին, արդարին ու մեղավորին, մեծին և փոքրին: Միայն ու միայն այդ ժամանակ մեր կյանքն ազնիվ ու երջանիկ կլինի: Եվ այդ ժամանակ հարության շնորհը զվարթորեն կցողվի մեր արևակեզ ճակատներին՝ որպես մայիսյան ցող, քանի որ մեր սրտերում կվառվի հարության լույսը, և աստվածային շնորհներն ու պարգևները մշտապես անապակաս կլինեն մեզմիջ թե՛ այժմ, և թե՛ հավիտյանս. ամեն:

Ներսես քահանա
ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«Փոքր քարոզգիրք ժողովրդի համար», Կ. Պոլիս, 1905 թ.

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԶՈՐԱՎՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՆ ԵԿԵՂԵՑԻ Է ԲԵՐՎԵԼ «ԶՈՐԱՎՈՐ» ԱՎԵՏԱՐԱՆԸ

Մայիսի 14-ին՝ սուրբ Մովսես Գ Տաթևացու մահվան հիշատակության օրը, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանից Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցի բերվեց «Զորավոր» Ավետարանը:

Հայ եկեղեցու նշանավոր հայրապետներից սուրբ Մովսես Գ Տաթևացու մահվան հիշատակության օրը Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու ուխտի օրերից է:

Եկեղեցու հոգևոր դասը և ուխտավորները հանդիսավոր թափոռով դիմավորեցին Ավետարանը: Թափոռը, հոգևոր հովիվ Տեր Գրիգոր քահանա Գրիգորյանի գլխավորությամբ, նույն գործեց եկեղեցի: Ուխտի Սուրբ Պատարագի



րագ մատուցեց եկեղեցու խորհրդակատար Տեր Վահան քահանա Առաքելյանը:

Սուրբ Պատարագի ավարտին Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու խաչքավոր Վարդան Ամարյանի հովանավորությամբ ուխտավորները ստացան Հովհան Կանանդեցու «Կերակուր քահանաների» գրքույկը: Հավատացյալները, մինչև Երեկոյան ժամերգությունը, հաղորդակից եղան «Զորավոր» Ավետարանի կենարար գործնականը՝ հայցելով օրվա հիշատակելի հայոց հայրապետի բարեխոսությունը:

ՍՈՒՐԲ ԽԱՅԻ ԵԿԵՂԵՑԻ ԲԵՐՎԵՑ ՏԻՐՈՋ ԽԱՆՉՓԱՅՑԻ ՄԱՍՈՒՆՔԸ

Մայիսի 18-ին՝ Սուրբ Խաչի երևման տոնին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Արարատյան Հայրապետական թեմի Արաբկիրի Սուրբ Խաչ եկեղեցի բերվեց Տիրոջ Սուրբ Խաչափայտի մատուցը:

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանի օրհնությամբ Սուրբ Խաչի երևման տոնը հռչակված է Արաբկիրի Սուրբ Խաչ եկեղեցու ուխտի օր:



Առավոտյան ժամերգության ավարտին եկեղեցու հոգևոր դասը և հավատացյալ հայորդիները, եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Պարթև քահանա Մուրադյանի գլխավորությամբ, եկեղեցական թափոռով դիմավորեցին սուրբ մատուցը, որը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկեղեցի բերեց Տեր Տիգրան քահանա Բաղիրյանը:

Տոնի առթիվ Սբ. Խաչ եկեղեցուն Նավասարդ Արքագանի հանդիսապետությամբ մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիցը Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Վարդան եպիսկոպոս Նավասարդյանն էր:

Իր քարոզում Վարդան Արքագանն անդրադարձավ Սուրբ Խաչի երևման տոնի պատմությանն ու խաչի խորհր-

դին. «Պատմական այդ իրողության հիշատակումը մեր եկեղեցուն Խաչի փառաբանության, Խաչի խորհրդի մասին խորհրդածելու և այդ խորհուրդը մեր կյանքում վերաթևոթելու մի յուրահատուկ ժամանակ է: Քրիստոս խաչվեց, որ մենք փրկություն ունենանք:

Երբ Տիրոջ իմաստության լույսը ճառագում է մարդու հոգու մեջ, երբ մարդն իր սրտով, մտքով և հոգով ընդունում ու ճանաչում է Քրիստոսին, նրա կյանքն առավել իմաստավորվում է: Մեր կյանքը փոխվում է Քրիստոսով, մեր կյանքն առավել կյանք է դառնում»,- նշեց Վարդան Արքագանը:

Արաբկիրի Սուրբ Խաչ եկեղեցու համայնքը խորհրդանշական խաչեր էր պատրաստել, որոնք Նավասարդ Արքագանը բաշխեց եկեղեցուն գտնվող մանուկներին:

Հավարտ Սուրբ Պատարագի Նավասարդ Արքագանն ընթերցեց սուրբ Դավիթ Անհաղթի խաչին նվիրված քարոզից մի հատված, ապա սուրբ Հովհան Ոսկեբերանի՝ Սուրբ Խաչին նվիրված խոսքը. «Խաչը մեր փրկության նշանն է, Խաչը քրիստոնյաների հույսն է, Խաչը եկեղեցու հիմքն է, Խաչը սատանայի պարտությունն է, Խաչը որբերի հայրն է, Խաչը ամբարիշտների դատավորն է, Խաչը հիվանդների բժիշկն է, Խաչը օրվա զենքն ու գիշերվա պահպանիչն է, Խաչը ծարավողների աղբյուրն է, Խաչը լույսն է խավարում նստածների և ազատագրումը գերվածների, Խաչը անօրեցի տապալումն է»:

Դիմելով հավատավոր ժողովրդին՝ Նավասարդ Արքագանը շնորհավորեց Սուրբ Խաչի երևման տոնի առթիվ, ապա շնորհավորեց Վարդան Արքագանին նոր նշանակման առթիվ ու մաղթեց բեղմնավոր ծառայություն ի պաշտոնություն Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու:

Այնուհետև Նավասարդ Արքագանը Սուրբ Խաչափայտի մատուցով օրհնեց ժողովրդին ու «Պահպանիչ» աղոթքով արձակեց նրանց:

Սուրբ Խաչ եկեղեցու ուխտի օրվա առթիվ եկեղեցու բակում տոնախմբություն և պարուսուցում էր կազմակերպել «Մենք» կրթամշակութային ՀԿ-ի «Մենք» պարի խումբը՝ Ստեփան Թորոյանի ղեկավարությամբ:

Նավասարդ Արքագանն առանձին հանդիպում ունեցավ նաև եկեղեցու ծխական խորհրդի նախաձեռնող խմբի անդամների հետ: Հանդիպմանը քննարկվեցին ծխական խորհրդի առաքելությանը, կազմակերպչական աշխատանքներին, ծրագրերին և գործունեությանը առնչվող հարցեր: Արքագան հայրն օրհնության ու զնախատանքի գրեթե համաձայն կյանքում ակտիվ գործունեություն ծավալող ծխական խորհրդի 4 անդամների, որոնք աջակցել են եկեղեցու կարևոր խնդիրների կարգավորմանը:

ՀԱՄԱՐԱՊԵՏԱՆ ԳՐԱԳՆԵՐԸ ԵՎ ՆԱԿԱՐԳՆԵՐԻ ՇԵՂԵՎ

Արարատյան Հայրապետական թեմի երիտասարդները Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը նշել են ազգային ավանդույթները պահպանելով: Մայիսի 29-ին եկեղեցիներում մատուցվեց Սուրբ Պատարագ: Ավելի ուշ երիտասարդները տոնը շարունակեցին ազգային երգ ու պարով, ժողովրդական խաղերով՝ ծաղկեպսակներ հյուսեցին, ներկայացվեց վիճակահանության ժողովրդական ծեսը:

Ավանդության համաձայն՝ «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն»-ի հարակից այգում տեղի ունեցավ տոնակատարություն, որը նախկինում ժողովրդին հայտնի էր «Ջանգյուլում» անվամբ:

ԱՅՐԵ Երիտասարդաց միությունների համակարգող Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանի խոսքով՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանի օրհնությամբ տասը տարուց ավելի է Համբարձման տոնին կազմակերպվում է միջոցառում:

«Մեր եկեղեցին ազգային է: Մեր տոները՝ քրիստոնեական ու ազգային, շարկապված են: Եթե կտրվենք մեր ավանդույթներից, կկտրվենք մեր արմատներից: Յուրաքանչյուր տոն ունի իր ազգային ծեսը: Համբարձման տոնին նվիրված ազգային ավանդույթները մենք պահպանում ենք»,- նշեց տեր Պետրոսը:

Նախկինում տոնին երիտասարդ աղջիկները կժի մեջ լցնում էին յոթ աղբյուրից հավաքած ջուրը, ծաղկի թերթիկներն ու պատրաստվում վիճակ գցելուն: Շրջում էին տնետուն, երգեր երգում, մթերքի կամ մետաղադրամների տեսքով նվերներ ստանում ու հավաքվում էին վիճակի կուլայի շուրջ:

Համբարձման տոնին կազմակերպված միջոցառմանը երիտասարդները վիճակահանության ժողովրդական ծեսի համար ընտրել էին Աստվածաշնչից մեջբերումներ: Տեր Պետրոսը, պնդումներին, թե վիճակահանությունը գուշակություն է, նշում է, որ այն գուշակության ու սնահավատության հետ պետք չէ կապել: Հիշեցնում է, որ ավետարա-



նական դրվագում առաքյալները վիճակահանությամբ են ընտրում 12-րդ առաքյալին՝ Հովհանի փոխարեն:

Միջոցառմանը հանդես եկավ և օրը տոն դարձրեց Ռուդիկ Հարոյանի անվան «Մասունք» ավանդական երգի-պարի համույթը: Երիտասարդները ներկաներին հյուրասիրեցին տոնի ուտեստը՝ կաթնապուր և գաթա:

ԿԻՐԱԿՆՈՐՅԱՆ ԳՐԱԳՆԵՐԸ ՆԵՒԼ ԵՆ ՀԱՄԱՐԱՊԵՏԱՆ ԳՐԱԳՆԵՐԸ

Մայիսի 29-ին Հայ Առաքելական եկեղեցին նշեց Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը: Եկեղեցիներում մատուցվեց Սուրբ և Ամենա Պատարագ: Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանի օրհնությամբ, թեմի մի շարք եկեղեցիներում կազմակերպվել էին տոնական միջոցառումներ:



Համբարձման տոնը Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցուն նշվել է ազգային երգ ու պարով: Մինչև այդ, եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Նորայր ավագ քահանա Բաղդասարյանը ներկայացրել է տոնի հոգևոր խորհուրդը: Միջոցառումում իրականացվել է Նորքի հայորդաց տան հետ: Օրը տոն է դարձրել «Հայկազունք» ազգագրական երգի և պարի համույթը:

Ավանի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում Երեկոյան ժամերգության ավարտին տոնը նշվել է ազգային տոնակատարությամբ, երգ ու պարով: Միջոցառումն իրականացրել են եկեղեցու «Ծիրանավոր» երիտասարդաց միության անդամները և կիրակնօրյա դպրոցի սաները: Մասնակիցները կատարել են վիճակահանության ժողովրդական ծեսը, ներկաներին հյուրասիրել տոնի ծխական ուտեստը՝ գաթան:

Ազգային ավանդույթները պահպանելով, վիճակ գցելով ու Համբարձման տոնին նվիրված երգերով են տոնը նշել նաև Վերին Շենգավիթի Սրբոց Առաքելոց եկեղեցու կիրակնօրյա դպրոցի սաները:

Սուրբ Սարգիս առաջնորդամիստ եկեղեցու և Երեբունի համայնքի կիրակնօրյա դպրոցների սաները մասնակցել են «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն»-ի հարակից այգում տեղի ունեցած տոնակատարությանը:

Արարատյան Հայրապետական թեմի տեղեկատվական բաժին

16 ՀՈՒՆԻՍ

ՍՈՒՐԲ ՀՈՒՓՍԻՄՅԱՆՅ ԿՈՒՅՍԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Հիփսիմյանց կույսերը 37 հոգուց բաղկացած նահատակների մի խումբ են, որոնց երկու օրվա ընթացքում և առանձին-առանձին նահատակված լինելու պատճառով է, որ «Հայսմավուր»-ներում և «Տոնացույց»-ներում այս երկու անուններով և առանձին են հանդես գալիս:

Պատմական ավանդությունը նրանց հռոմեացի է համարում, բայց Հայաստանում նահատակված լինելու և մեր երկրում քրիստոնեության նախօրեին իրենց անարատ արյունը թափած լինելու պատճառով հայերիս կողմից սեփական են նկատվել և Հայ Եկեղեցուն հարազատ են համարվել:

Ըստ սկզբնաղբյուր հանդիսացող Ագաթանգեղոս պատմիչի՝ Հռոմի Դիոկղետիանոս (284-305 թթ.) կայսրը ցանկանում է ամուսնանալ իր կայսրության ամենագեղեցիկ կույսի հետ: Երկրի չորս կողմն ուղարկված խուզարկուները, հանձնիս Հիփսիմեն անվամբ ազնվագույն կույսի, գտնում են գեղեցկագույն հարսնացուին, որը Հռոմում Գայանե անվամբ մայրապետի գլխավորած քրիստոնեական կուսանոցի կույսերից էր:

Կույսերը, իմանալով կայսեր հրամանի մասին, գիշերով գաղտնի հեռանում են Հռոմից: Նավ նստելով՝ նախ գնում են Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքը, որտեղից մեկնում են Երուսաղեմ և ապա Եղեսիայով անցնելով՝ գալիս Վան, որտեղ որոշ ժամանակ հաստատվում են Վարագա լեռան լանջերին: Այստեղ էլ իրենք իրենց ապահով չգտալով, դեպի հյուսիս գնալով, վերջնականապես հաստատվում են այդ օրերի հայր մայրաքաղաքի՝ Վաղարշապատի շրջակայքում՝ «Հնձան» կղզված տեղում:

Հայաստանում նրանց գտնելու պատճառը համարվում է նորից նույն Դիոկղետիանոսի հրահանգը Տրդատին, ըստ որի Տրդատն իր երկրում ապաստանած կույսերին պիտի գտներ և կայսեր մոտ ուղարկեր: Արդարև, Տրդատի մարդիկ հեշտությամբ գտնում են Հիփսիմենին և տանում թագավորի մոտ, իսկ Տրդատը, հմայվելով Հիփսիմենի գեղեցկությամբ, ինքն է որոշում տիրանալ նրան: Հիփսիմենը մերժում է և ընդդիմանում: Նա կանչում է Գայանեին, հանձնարարում իր սանուխուն համոզել, որպեսզի սա ընդունի թագավորի առաջարկը: Գայանեն, ընդհակառակը, քաջալերում է իր սանիկին, որպեսզի հաստատուն մնա իր մերժման մեջ և չփոխանակի երկնքի երջանկությունը երկրավոր փառքի և վայելքների հետ: Գայանեն, արքայի հրամանին չենթարկվելու համար, ծանր չարաչարանքների է ենթարկվում և իր երկու ընկերուհիների հետ մեծ ծանրություն է ապրում: Հիփսիմենը, վերջ ի վերջո զորանալով, փախչում է իր ընկերուհիների մոտ: Իսկ Տրդատը, որ մի իսկա և գործը մարդ էր, ըստ շարականի՝ «մանկան պես կույսից պարտություն կրելով, ամաչում էր», ուստի կատաղելով, դահիճներ է ուղարկում և հրամայում է սպանել Հիփսիմենին: Ձեռքերից և ոտքերից ամրոնի ամրացրած ցցերի վրա պրկում են նրան և ջահերով այրում մարմինը: Տեսնելով, որ դեռ կենդանի է, հանում են աչքերը և անդամ առ անդամ մասնատելով՝ նահատակում են Քրիստոսի հրաշալի վկայուհուն: Երբ մյուս ընկերուհիները մոտենում են, որպեսզի հավաքեն մարմինը և պատվով թաղեն, նրանցից էլ 32 հոգու սրախողխող են անում:

Ապա դահիճները ներխուժում են նրանց բնակարանը և գտնելով հիվանդության պատճառով պառկած և ողջ մնացած միակ կույսին՝ նրան էլ սրախողխող են անում: Հաջորդ օրը Տրդատը հրաման է արձակում սպանել խմբի գլխավորին և մայրապետին՝ Գայանեին, իր երկու ընկերուհիների հետ: Նախ կտրում են Գայանեի լեզուն, որով համարձակվել էր գոտեպնդել և խրախուսել Հիփսիմենին, որ սա ընդդիմանա թագավորին, ապա նրանց էլ Հիփսիմենի նման ոտքերից և ձեռքերից պրկում են գետնի վրա,

մորթագերծ են անում և սրի քաշելով՝ սպանում: Գայանեի և իր երկու ընկերուհիների նահատակությունը տեղի է ունենում քաղաքից դուրս, հարավային կողմում:

Երբ տեղի էին ունենում այս նահատակությունները, սուրբ Գրիգորը դեռևս խոր Վիրապում բանտարկված էր: Ինքն օր սրբերի մասունքները անթաղ մնացին, բայց ոչ մի գազան կամ գիշակեր թռչուն չմոտեցավ նրանց:

Որպես անմեղ կույսերի սպանության հետևանք՝ Տրդատը խելագարվում է,



նրան բժշկելու համար Գրիգորին հանում են վիրապից, որի առաջին գործը լինում է սրբուհիների անթաղ մասունքները առանձին-առանձին, տապանների մեջ հավաքելով իրենց նահատակված վայրում թաղելը: Նա երեք վկայարաններ կառուցեց մեկը՝ Հիփսիմենի և իր 32 ընկերուհիների նահատակված վայրում, մյուսը՝ իրենց բնակավայրում, որտեղ նահատակվել էր ինքնաճ կույսը՝ հնձանի տեղում, իսկ երրորդը՝ Գայանեի և իր երկու ընկերուհիների նահատակված վայրում: Կույսերի մարմինները իրենց մեջ գետեղած տապանները կնքվեցին Լուսավորչի կնիքներով: Սկզբնապես գրեթե անհետացել էին նրանց վկայարանները: Ուստի Սահակ կաթողիկոսը (387-438 թթ.) փնտրեց, գտավ և հայտնաբերելով՝ իր կնիքն էլ դրեց սուրբ Գրիգոր Լուսավորչի կնիքի կողքին և նորից պատվով թաղելով՝ վկայարանները վերակառուցել տվեց: Երկու դար հետո՝ Կոմիտաս կաթողիկոսի օրոք (615-628 թթ.), այս վկայարան-մատուցները դարձյալ անշուք վիճակում էին: Հիփսիմյանց վկայարաններն ամբողջությամբ քանդվեցին հետո, երբ ցանկացավ նորովի կառուցել, սրբուհիների տապաններն ի հայտ եկան, որոնց վրա ավելացրեց իր կնիքը և վերստին թաղելով՝ 618 թ. դրա վրա հրաշակերտ եկեղեցի կառուցեց. «Հրաշատես և վայելուչ, նազելի և պայծառ»: Այս տաճարի խորանի ներքևում մի գետնահարկ մատուռ կառուցեց և գետեղեց սրբուհու տապանը, որը մինչ այսօր մնում է: Նաև եկեղեցին է մույնությամբ պահպանվել, բացի՝ զանգակատնից, որը հետագա դարերի կառուցել է: Իսկ Եզր կաթողիկոսը (630-641 թթ.), քանդելով Գայանյանց անշուք մատուռը, մի նոր փառավոր եկեղեցի է կառուցում. «Ընդարձակ և լուսավոր, կոփածո քարերով և կրով»: Այս եկեղեցին էլ գրեթե մույնությամբ պահպանվում է: Իսկ երրորդ մատուռի վերջին վերաշինողը եղավ Նահապետ կաթողիկոսը (1691-1705 թթ.)՝ Շողակաթ անվան տակ:

Օրմանյանը վկայում է, որ Հիփսիմյանց և Գայանյանց տաճարների տակ

գետնափորներ կան՝ կառուցված մեծամեծ քարերով, որոնց մեջ են սրբերի ոսկորները: Սրանց գոյությունը վերջին ժամանակներում նորից հաստատվեցին. Հիփսիմյանցը՝ լատին կրոնավորների կողմից գողության փորձի ժամանակ, Գայանյանցը՝ Հովհաննես արեղայի հետաքրքրասիրության և իր կողմից հետախուզության շնորհիվ, այս երկուսի մասին մեզ տեղեկացնում է Առաքել Դավիթյանի պատմիչը:

Իսկ 1978 թ. Հիփսիմենի եկեղեցու հյուսիս-արևելյան պարսպի մոտ վերանորոգման աշխատանքներ կատարելու ժամանակ «հայտնաբերվել էր վաղ քրիստոնեական շրջանի բազիլիկ տիպի մի եկեղեցի-մատուռ»: 1979 թ. նույն մատուռի մեջ կատարված պեղումների արդյունքում ի հայտ եկան «մի շարք գերեզմաններ՝ գլխատված աճյուններով»: Սրանք համարվում էին սուրբ Հիփսիմենի 32 ընկերուհիների աճյունները: Սրա վերաբերյալ Վազեն Ա Ամենայն Հայոց հայրապետը և Մայր Աթոռի Դավանատունը հատուկ հաղորդագրություն են հրապարակել, որում ասվում է. «Սույն նորագույն հայտնագործությունը մի նոր մյուսական վկայություն է Հայոց քրիստոնեական հավատքի պատմական վավերականության» («ԷՋՄԻԱԾԻՆ» ամսագիր, 1979 թ., մայիս):

Ըստ Ագաթանգեղոսի՝ նրանք նահատակվեցին Գրիգորի վիրապից դուրս գալու տարում՝ 301 թ., հայոց հոռի ամսվա 26-ին և 27-ին, որն ըստ Օրմանյանի համապատասխանում է նոյեմբերի 6-ին և 7-ին, բայց «Հայսմավուր»-ների մեջ նշված է հոկտեմբերի 5-ին և 6-ին: Իսկ ներկայումս Հիփսիմյանց տունը տոնում ենք Հարության կիրակիների սկիզբը հանդիսացող կիրակիի հաջորդ առաջին երկուշաբթի օրը, իսկ երեքշաբթի օրը՝ Գայանյանց տոնը:

Հիփսիմյանց կույսերը կարևոր տեղ են գրավում հայ վկայաբանություններում և ընդարձակորեն ներկայացվում են Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու մոտ:



Հայկական «Հայսմավուր»-ներն էլ, հետևելով վերոհիշյալ պատմիչներին, լայնորեն ներկայացնում են Հիփսիմյանց պատմությունը՝ շուրջ 10 էջ: Յուրաքանչյուր «Հայսմավուր» Հիփսիմյանց վկայաբանության վերջում փոքր ներքող ունի՝ նվիրված սրբուհիներին, որոնցից մի քանի պատառիկներ ցանկանում ենք ներկայացնել աշխարհաբար:

Փեշտիմալճյանի հրատարակած «Հայսմավուր»-ի մեջ ասվում է. «Քրիստոսի հարս, որ այսօր վկայական արյունով երկինք փոխադրվեցիր, զարդարված թագուհու նման նստեցիր երկնային Թագա-

վորի աջ կողմում, նաև մեզ, քո կուսական երկունքից ծնվածներին՝ Հայ եկեղեցու հավատացյալներին, որոնք տոնախմբությամբ քեզ են պատվում, ընդունիր քո երկնային առաքաաստի պարախմբի մեջ, որպեսզի մենք էլ քեզ հետ փառավորենք Հորը, Որդուն և Ս. Հոգուն հավիտյան. ամեն»:

Մարգվանցու հրատարակած «Հայսմավուր»-ի ներքողը ավելի երկար է, որտեղ ասվում է. «Հիփսիմեն, որ արեգակի պես արևմուտքից ծագեցիր Արևելյան աշխարհում, այն լուսավառ աստղերով հանդերձ, որոնք քո հետ էին: Հիփսիմեն, կույսերի վայելչություն, մարտիրոսների պարծանք, հրեշտակների ուրախություն, դեռին վախեցնող...: Հիփսիմեն, երկնային Փեսային հարսնացյալ, Աստծո ինքնանվեր ընծա...»

Ապա շարունակում է ներքողը, փոխանի՝ փոխ մեկ խոսելով Հիփսիմենի մասին, մեկ՝ Գայանեի. «Գայանե, ամենամաքուր խորհուրդ, հակառակորդներին հաղթող: Հիփսիմեն, պայծառագույն շառավիղ, պտղաբեր ծիրանի, քաղցրապտուղ արմավենի: Նախանձելի վարքով Գայանե, օրհնակելի պարկեշտությամբ, աղանանդյա պնդություն, աստվածահաճ դաստիարակ, ողջախոհ մայր, ամենագետ ուսուցիչ...» և այլն:

Լիակատար «Վարք սրբոց»-ն այսպես է վերջացնում Հիփսիմյանց վարքագրությունը. «Արժանի է, որ սքանչանանք մեր Փրկչի անբավ մարդասիրության և վերին իմաստության անքննելի տեսչության վրա, որ սուրբ կույսերի արյուն հեղմամբ և նրանց բարեխոսությամբ Հայաստան աշխարհին հրաշալի լուսավորություն պարգևեց, ինչպես իր վարդապետական քարոզչության միջոցով բազմիցս հաստատեց, հենց ինքը, երիցս երանելի մեր Սուրբ Լուսավորիչը»:

Սուրբ Հիփսիմյանց կույսերի հանդեպ հայ ժողովրդի զգացմունքներն այնքան ջերմ են, որ երկու արվեստի գործեր են հասել մեզ: Առաջինը՝ սուրբ Հիփսիմյանց տաճարն է, որն իր զուսպ, ծանրահիստ և բացառիկ գեղեցիկ կառուցվածքներով հայ ճարտարապետության գլուխգործոցներից է և դրա լավագույն արտահայտությունը: Երկրորդը՝ Հիփսիմյանց հիշատակին հորինված գեղեցկահյուս «Անձիք նվիրյալքս սիրույն Քրիստոսի» շարականն է: Երկուսն էլ մեր Կոմիտաս կաթողիկոսի հոգածությամբ և հեղինակությամբ են ստեղծվել, ով նախքան կաթողիկոս լինելը, եղել է փակակալ լուսարարապետը Ս. Հիփսիմյանց սրբավայրի:

«Անձիք նվիրյալ» շարականը գրված է հայ այբուբենի տառերի կարգավորությամբ, հետևաբար բաղկացած է 36 տներից (Օ և Ֆ տառերը հետագայի՝ 12-րդ դարից հետոյի հավելումներն են): Այս շարականն առաջին և լավագույն մոտիվն է այբբենական կարգավորությամբ հորինված շարականների, սրանից հետո բազում այլ նմանատիպ կարգավորությամբ շարականներ ստեղծվեցին որոնք կոչվեցին «Անձիք»:

«Անձիք նվիրյալ» շարականը միաժամանակ մեր առաջին շարականն է հանդիսանում, որի հեղինակը ստույգ հայտնի է: Օրմանյանը հետևյալ գնահատականն է տալիս շարականին. «Այս շարականը հայկական տաղաչափության օրինակ է, բաների և ոճի ճոխությամբ հայկական ընտիր օրինակ է, նշանավոր է իր բանաստեղծական արվեստի լուծումներով: Պատմական հիշատակությունների ճշտությամբ և հետևողականությամբ այս շարականը և եկեղեցական ու հոգևոր օժիթությամբ մի անզուգական քերթված է»: Եղանակն էլ ինքնան էլ միալար լինի, սակայն այդ միալարության մեջ էլ սրտաշարժ և գրավիչ է, աշխույժ և անուշ ընթացքով: Այնպես որ երաժշտական առումով էլ մեր կարևորագույն շարականներից մեկն է:

Շնորհք արքեպս. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ
«Հայագի սուրբեր», «ԳԱԼՁԱՍՄԱՐ»
մատենաշար, Երևան, 1997 թ.

ԴՐԱՆՏԻ ԸՆՏԱՆԻՔ

ՄԵՎԱԴԱ ՀԱԿՈՐՔԱՆՆ ՈՒ ՆԵԼԼԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ

«Շողակն Արարատյան» ամսաթերթի սիրելի՛ ընթերցողներ, «Դրախտի ընտանիք» խորագրով մեր շաբաթի զրուցակիցներն են բժիշկ-սեքսոպաթոլոգ Սևադա Հակոբյանն ու մանկավարժ Նելլի Սարգսյանը:

Զրուցակիցներին ընտանիքը քսաներեք տարեկան է, ունեն երեք դուստր՝ Աշխենը, Անահիտն ու Մարին: Տան միակ տղամարդը ժպիտով պատմում է. «Մեր ընտանիքում տիրում է խաղաղ ու ներդաշնան մթնոլորտ, որտեղ ես պարտավոր եմ մշտապես «չափված-ձևված» լինել՝ հաշվի առնելով տան անդամների աղջկական առանձնահատկությունները»:

Տիկին Սարգսյանը նշում է, որ դուստրերին տալիս են հայեցի դաստիարակություն, կարևորում հայ քրիստոնյայի կերպարի ձևավորումն ու լավ կրթություն ստանալը: Եվ այդ ամենն անում են ոչ թե հատուկ մեթոդներով, այլ սեփական օրինակով: Պարոն Հակոբյանն էլ լրացնում է. «Մենք մեծ ակնածանք ունենք ուսուցիչների հանդեպ, այդ պատճառով էլ մեր երեխաներին այնպես ենք դաստիարակել, որ նրանք էլ նույն խորին հարգանքն ունենան»:

Զրուցակիցներս դուստրերին փոխանցում են անմնացորդ սեր ու ջերմություն, ապահովում տան առողջ մթնոլորտը, իսկ նրանցից սովորում են լինել կյանքի տարբեր իրավիճակներում առավել ճկուն: «Մենք անում ենք ամեն բան, որ հոգով ու ամբողջ առողջ երեխաներ մեծացնենք, ասում է պարոն Հակոբյանն ու հավելում. «Նրանք էլ օգնում են տիրապետել համակարգչային նոր հմտությունների և առավել պրոֆեսիոնալ ներկայանալ համացանցում»:

Տիկին Սարգսյանը հիշում է՝ ամուսնացել է երիտասարդ տարիքում և պատկերացրել, որ իր ընտանիքը նման կլինի

հայրական ընտանիքին. «Այն ամենի մասին, ինչ ունեն հիմա, ուղղակի չէի էլ կարող երազել: Մեր ընտանիքում երբեք չի եղել կին-տղամարդ դերակատարումների բաժանում, ինչը ես շատ եմ կարևորում: Մենք միմյանց հետ հաճախ ենք խոսում, կարողանում ենք լսել միմյանց և ներել: Ես շնորհակալ եմ Աստծուց այս ամենի համար»:

Պարոն Հակոբյանի խոսքով՝ տան ամեն երեկո «կտր սեղաններ» են կազմակերպում, որտեղ քննարկում են ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի օրվա անցուդարձն ու պլանավորում հետագա անելիքները: «Երեխաները շատ ակտիվ մասնակցություն են ունենում այդ ամենին՝ բարձրաձայնելով իրենց մտքերը, հաճախ նաև ուղղորդելով, թե որ հարցերին ավելի շատ ուշադրություն դարձնենք: Մեր դուստրերը հավասարապես մասնակցում են թե՛ ընտանեկան խնդիրների քննարկմանը, թե՛ ուրախության առիթների պլանավորմանը»:

Այն հարցին, թե ինչ հատկանիշներ են գրավել դիմացինի մեջ ծանոթանալիս և տարիների ընթացքում ինչ որակներ են բացահայտել, տիկին Սարգսյանը պատասխանում է. «Ինձ գրավել է Սևադայի մեծ սերն ու նվիրվածությունն «ընտանիք» երևույթի հանդեպ, իսկ արդեն տարիների ընթացքում գնահատել եմ նրա նպատակասլացությունը, անընդհատ կատարելագործվելու ձգտումն ու ինձ մշտապես ամուր թիկունք լինելը: Նրա կողքին կարող ես ոչ մի բանի մասին չանհամբարանալ»:

Իսկ պարոն Հակոբյանն անկեղծանում է, որ Նելլիի մեջ սկզբում գնահատել է հեղությունն ու ամաչկոտությունը, խոհեմությունն ու սովորելու մեծ ձգտումը, իսկ հետո արդեն բացահայտել, թե որքան խելացի կարող է լինել կինը և ընտանեկան հարցե-

րը կարգավորելիս որքան մեծ դերակատարում կարող է ունենալ. «Նա ամբողջ կյանքում ինձ միշտ նեցուկ է եղել թե՛ գիտական գործունեություն ծավալելիս, թե՛ աշխատանքային տարբեր հարցերում: Ես շատ էմոցիոնալ մարդ եմ, ու որևէ ծախսողում ինձ համար մեծ սթրես է: Նելլին օգնում է



խնդիրների ժամանակ լինել ավելի սառնասիրտ, շրջահայաց ու համբերատար: Չլինելով բժիշկ՝ նա կարողանում է յուրահատուկ կերպով մեկնաբանել ու քննարկել իմ գործի հետ կապված շատ մանրամասներ»:

Ամուսինները նկատում են՝ իրենց ընտանիքում կան կանոններ, որ պարտադիր պահվում են բոլորի կողմից, այն է՝ գաղտնիքներ չունենալը, մեկը մյուսից տեղե-

կացված լինելն ու անկեղծությունը:

Ընտանիքների հաջողության և անհաջողության դեպքերին անդրադառնալիս պարոն Հակոբյանը բացատրում է. «Ամուսնալուծությունների պատճառները բազմաշերտ են, բայց բոլորի հիմքում մարդկանց էգոիզմն է ընկած, սեփական ես-ը մի կողմ չդնելը: Օրինակ՝ մենք չենք ունեցել «իմ աշխարհ, քո աշխարհ», «իմ առանձին տիրույթ» հասկացություններ: Մեզ մոտ միշտ «մենք»-ն է իշխել, երբեք չեն եղել փակ հարցեր, ամեն մեկս էլ փորձել ենք թույլ չտալ որևէ բան, որը կվնասի ընտանիքին: Եվ հենց այդ հոգատար վերաբերմունքը նպաստել է մեր՝ որպես ընտանիք կայանալուն: Ինչ վերաբերում է ներկայիս սերնդին, նրանք ավելի նպատակասլաց են և ինտելեկտուալ, աշխարհը ավելի լավ են ճանաչում, բայց հաճախ սեփական կարիերան ընտանիքից ավելի են կարևորում, ինչը ևս դառնում է ամուսնալուծությունների պատճառ»:

Տիկին Սարգսյանն էլ գտնում է. «Զույգերը պիտի համբերատար ու հանդուրժող լինեն: Բոլորս էլ դժվարություններ ունենում ենք, բայց այդ ամենը հաղթահարելի է, եթե սեր կա: Սևադայի աշխատանքային ծանրաբեռնվածությունը երբևէ չի խանգարել մեզ հետ ժամանակ անցկացնելուն և ընտանեկան բոլոր խնդիրներին ու որոշումներին տեղյակ լինելուն»:

Զրուցակիցներս ունեն նաև միասին ճամփորդելու հիմնալի ընտանեկան ավանդույթ: «Ճամփորդելիս առնչվում ենք գեղեցիկին, բացահայտում աշխարհը, նորովի ճանաչում ինքներս մեզ: Հնարավորություն ենք ունենում միմյանց հետ շատ ժամանակ անցկացնելու, զրուցելու, պարզապես իրար կողքի լինելու, ինչի կարիքն ամենաշատն ունեն երեխաները»,- մանրամասնում է տիկին Սարգսյանը: ➔ Էջ 8

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ ՔԱՐՈՉ ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿԻ ՄԱՍԻՆ (հատվածաբար)

Սկիզբը՝ թիվ 4-ում

Բ. Արդ, ինչպե՞ս կենդանացանք Քրիստոսով, երբ որ ահա մարմնով տակավին ենթակա ենք մահվան: Նախ ասենք, որ բուժամիջոցը համապատասխանում է հիվանդությանը: Եվ ինչպես որ Ադամը, երբ դատապարտվեց, մահվան մեջ հայտնվեց խորհրդով, իսկ մարմնով բազում տարիներ անց մեռավ, այնպես էլ մենք Քրիստոսով անմահության մեջ ենք հայտնվել հույսով, իսկ իրապես պիտի անմահանանք բազում տարիներ հետո:

Երկրորդ՝ որովհետև ինչպես որ նախ մեղքը գործվեց և ապա՝ պատիժը, մահը դրվեց ողջ ադամական բնության վրա, այնպես էլ մեր Տերը նախ մեղքը վերցրեց մեզանից և ապա՝ պատիժը, այսինքն՝ մահը պիտի վերցնի մեր ողջ բնությունից:

Երրորդ՝ ինչպես որ սկզբնական մեղքին հաղորդ ենք լինում ծննդամբ, իսկ պատժին հետո՝ մահվամբ, այնպես էլ նախ հանցանքների թողությանն ենք հաղորդ լինում և ապա՝ կյանքի հարությանը:

Չորրորդ՝ ըստ իրադարձությունների հաջորդականության. քանզի ինչպես որ հանցանքը նախնական է, իսկ պատիժը հետևում է հանցանքին, այնպես էլ՝ նախ հանցանքների թողությանն ենք արժանանում և ապա՝ կյանքի հարությանը՝ փառքի մեջ:

Հինգերորդ՝ նույն Ինքը՝ Քրիստոս, նախ մեզ ազատեց մեղքից՝ Իր անապական

ծնունդով և ահա մահվանից՝ մահվան միջոցով:

Վեցերորդ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս մահվամբ վերացրեց մահը, քանզի նախ մեռավ և ապա Հարություն առավ: Նույնպես և մենք նախ մեռնում ենք և ապա՝ կենդանանում հարությամբ:

Յոթերորդ՝ մենք երկու հայր ունենք. ըստ մարմնի՝ Ադամը, իսկ ըստ հոգու՝ Քրիստոս: Եվ այս երկու լուծն էլ (այսինքն՝ Ադամի մահը և Քրիստոսի կյանքը) պարտավոր ենք կրել մեր մեջ:

Ութերորդ՝ մարդն ունի երկու մահ և երկու կյանք՝ հոգու և մարմնի. կրկնակի է նաև Քրիստոսի Գալուստը: Եվ քանի որ հոգին մարմնից պատվական է, Քրիստոս Իր Առաջին գալստյամբ կենդանացրեց մեր հոգին մեռյալներից, մեղքից ու դժոխքից, իսկ երկրորդ գալստյանը հարություն կտա մեր մարմինները:

Իններորդ՝ Քրիստոս չարչարվեց մեզ համար, մեռավ ու հարություն առավ և մեզ անմահություն տվեց. արդ, մենք էլ պարտավոր ենք Նրա հետ մեռնել և Նրա հետ հարություն առնել: Այս պատճառով այժմ մեռնում և չարչարակից ենք լինում Քրիստոսին և հետո հարություն առնում ու Նրա փառքին հաղորդ դառնում:

Տասներորդ՝ Ադամի հանցանքի հետևանքով ողջ երկիրն անիծվեց ու ապականվեց... Հետևաբար, մեզ համար

անպատշաճ էր անմահ և անապական մարմնով բնակվել ապականելի երկրում: Այլ երբ որ արարածները նորոգվեն, այն-ժամ և մենք կնորոգվենք մարմնով և անմահ կյանքով կմտնենք փառքի մեջ:

Գ. Հիմ ուխտի բազում օրենքներից մեկն էր Զատիկի տոնին գառ մորթելը, որ Քրիստոս էր խորհրդանշում՝ ըստ այսմ. «Քրիստոս՝ մեր Զատիկը, մորթվեց»:

...Ինչպես գրված է Ելից գրքում, «այս ամիսը թող առաջիկա տարվա բոլոր ամիսների սկիզբը լինի: Եվ ամսվա տասներորդ օրը թող վերցնեն գառը և պահեն մինչև ամսվա տասնչորսերորդ օրը» (Ելից ԺԲ 2, 6):

...Սա խորհրդանշում է երեք օրենքները, այսինքն՝ բնականը, գրավորը և ավետարանականը: Առաջին ամիսը խորհրդանշում է բնական օրենքը, ըստ որի ստեղծվեց աշխարհը, իսկ ամսի տասը՝ գրավոր օրենքը՝ տասը պատվիրանները: Եվ այս երկու օրենքներում էլ մորթում էին գառը, որը խորհրդանշում էր Քրիստոսին. բնական օրենքում՝ ինչպես, օրինակ՝ Աբելի, Նոյի, Աբրահամի պատարագը, ինչպես և գրավոր օրենքում, ուր մշտապես գառ էին մորթում: Իսկ այն, որ տասնչորսերորդ օրն էին մորթում (այսինքն՝ չորս օր անց), խորհրդանշում է չորս Ավետարանները...

Հայտնի է, որ գառը երեք հատկանիշ պետք է ունենար՝ լիներ կատարյալ, արու և մեկ տարեկան: Արդ, գառը խորհրդանշում է

Քրիստոսին, որովհետև գառը վաղվա մասին չի հոգում... Նույնպես և Քրիստոս, որ գործով աղքատության օրինակ եղավ և առաքյալներին էլ պատվիրեց չհոգալ վաղվա մասին և չունենալ երկու հանդերձ (Մատթ. Զ 25, Մարկ. Ե 9): Եվ երբ խուզում ենք գառան բուրդը, նա համբերում է, մինչև որ այն վերստին աճի. նմանապես խաչելության ժամանակ Փրկչին մերկացրին ու լեղի խմեցրին: Իսկ երբ գառը տանում են մորթելու, չի աղաղակում, այլ համբերում է, ինչպես Եսային է ասում. «Ոչխարի պես սպանդի տարվեց և որոջի պես կտրիչի առաջ անմռունչ կանգնեց» (Եսայի ԾԳ 7): Եվ կատարյալ էր, որը խորհրդանշում է Քրիստոսի կատարյալ մարդ և Աստված, ինչպես նաև կատարյալ սուրբ լինելը: Արու էր, որը խորհրդանշում է Քրիստոսի գորուքությունը, քանզի Նա մեծ զորությամբ հաղթեց այս աշխարհի իշխանին՝ սատանային, ու արտաքսեց նրան: Եվ մեկ տարեկան էր, քանզի Քրիստոս, ըստ աստվածության, անսկիզբ է և անվավաճան, ինչպես ասում է առաքյալը. «Հիսուս Քրիստոս նույնն է երեկ այսօր և հավիտյան» (Եբր. ԺԳ 8):

Աղբյուրը՝ «Քարոզ վասն Զատիկին» («Գիրք քարոզության, որ կոչի Զմեռան հատոր», Կ. Պոլիս, 1740 թ.)

Պատրաստեց ԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԸ

ՀՈԳԵՎՈՐ ԱՆԴԱՍՏԱՆ

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆԸ

«Այսօր համբարձար փառք ի յերկինս եւ զկուսածին մարմինդ քո հրաշափառապէս լուսազարդեցիր»:

«Ժամագիրք»

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Համբարձման դրվագը նկարագրելիս Ղուկաս ավետարանիչը գրում է, թե Հիսուս, «վերցնելով իր աշակերտներին, գնաց, բարձրացավ Բեթանիա: Բարձրացնելով իր ձեռքերը՝ օրհնեց նրանց: Մինչդեռ օրհնում էր, հանկարծ առանձնացավ նրանցից և երկինք վերացավ»: Եվ Սուրբ Գիրքն ավելացնում է, թե աշակերտները մեծ ուրախությամբ և խնդությամբ վերադարձան Երուսաղեմ: Բեթանիայի Ձիթենյաց լեռան վրայից համբարձվելը խորհրդանշում էր Ադամի մեղսագործությամբ լի սգո տան՝ երկնքում ուրախության փոխակերպվելը, քանի որ «Բեթանիա» նշանակում է «սգո և չարչարանքների տուն»: Ադամի սգո և չարչարանքների տունն այն երկիրն էր, այն վայրը, որտեղ մենք կորցրինք մեր մարդկային բնությունը, զրկվեցինք դրախտի վայելչությունից: Ինչպես որ Բեթանիան մոտ էր Երուսաղեմ քաղաքին, այնպես և մեր ներքին աշխարհը մոտ է Վերին Երուսաղեմին: «Եթե մենք ցանկանանք, մենք կարող ենք փութով բարձրանալ դեպի վեր, ինչպես Տերը հրաշափառապես վերացավ երկինք», ասում է սուրբ Աթանաս հայրապետը: Իրապես, Քրիստոս միշտ մեզ հետ է, ինչպես եղավ Իր ողջ առաքելության ընթացքին: Քրիստոսյաներիցս պահանջվում է միայն զգալ և ճանաչել Նրա կենդանարար զորությունը անգամ այն պարագաներում, երբ ներկան, առավել ևս՝ ապագան, մշուշված են:

Քրիստոս քառասուն օր հետո համբարձ-

վեց երկինք, որովհետև Նրա մահվան պատճառով քառասուն ժամ տրտմեցին Իր աշակերտները, քանի որ Տիրոջ հարությունը գիշերը եղավ, իսկ աշակերտներին արշալույսին երևաց, որի համար էլ ստացվում է քառասուն ժամ: Եվ դրա փոխարեն պետք էր քառասուն օր ուրախանալ, որը ցույց է տա-



լիս, որ այն փոքր տրտմության պատճառով, որ այստեղ կրում ենք հանուն Քրիստոսի սիրո, այնտեղ մեծ մխիթարության ենք արժանանալու: Գործք առաքելոցում ասվում է. «Եվ երբ այս խոսքերն ասաց, մինչ նրանք դեռ նայում էին, երկինք վերացավ» (Գործք Ա 9): Քրիստոս երկինք համբարձվեց աշակերտների աչքի առաջ, որպեսզի աշակերտները պարզորոշ տեսնեն Նրա համ-

բարձվելը, որովհետև հարության ավարտը տեսան նշաններով և Նրա հետ խոսելով, բայց սկիզբը չտեսան, իսկ համբարձվելիս սկիզբը տեսան, բայց ավարտը ոչ, և Նրա երկինք գնալու մասին հրեշտակներից իմացան, ովքեր ասում էին. «Ով գալիլեացիներ, ինչո՞ւ կանգնած նայում եք երկնքին. այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսաք նրա երկինք գնալը» (Գործք Ա 11):

Այսօր Համբարձման խորհուրդն առաքելագործման, առաքելական քարոզչության վերանորոգման պատգամն է, որն ամենքիս միտքն ուղղում է դեպի Հիսուս Քրիստոս: Մեր Տիրոջ Համբարձումը նաև Իր երկրավոր առաքելության լույսն է: Քրիստոս, երկինք բարձրանալով, ամենքիս հույս տվեց, որ մենք ևս այնտեղ պետք է գնանք: Եթե Համբարձման պատմությունը չլիներ, մենք երբեք չէինք իմանա, թե Հարությունից հետո Քրիստոսի հետ ինչ տեղի ունեցավ: Հոր աջ կողմում նստելը մեզ համար կատարյալ հույս է՝ Աստծո հետ մեր իսկ ապագա միության: Հենց այս առաքելագործության տեսլականով է, որ Քրիստոսի երկու առաքյալները՝ սուրբ Թադեոսն ու սուրբ Բարդուղիմեոսը, եկան Հայաստան և, Քրիստոսի՝ «Գնացե՛ք, աշակերտեցե՛ք և մկրտեցե՛ք» պատգամի համաձայն, Քրիստոսի Հարության ավետիսը բերեցին նաև հայոց աշխարհին: Այդ նույն տեսլականով է, որ 300-ական թվականներին սուրբ Գրիգոր Լուսավորիչը հիմնեց աթոռամիստ քրիստոսահաստատ Մայր Աթոռ Սուրբ Եջմիածինը՝ դառնալով առաջին զահակալը Արարատյան նախամեծար Աթոռի:

Հիսուս Քրիստոս համբարձվելով՝ չհեռացավ մեզանից: Հիսուս Քրիստոս համ-

բարձվեց, բայց վերստին պիտի վերադառնա, որովհետև Իր գործը աշխարհի վրա դեռևս ավարտված չէ: Այն պիտի կատարվի, բայց Ինքը տնօրինեց, որ ժամանակ անցնի, որպեսզի այս բարի լուրը աշխարհի բոլոր ժողովուրդներին հասնի, քարոզվի, և մարդիկ, այս լուրն իմանալով, հավատքով ապրեն: Հիսուս Քրիստոս Համբարձման խորհրդով մեզ տալիս է փրկության ավետիսի կատարելությունը և մեզ ասում, որ ինչպես Ինքը շեփոխների ծայնակցությամբ համբարձվեց բազմելով Հոր աջ կողմում, այնպես էլ մենք պիտի կարողանանք մի օր վայելել Աստծո ներկայությունը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Համբարձման օրն ավանդաբար տոնակատարում է Հայրապետական Աթոռի փոխադրության հիշատակությունը՝ Կիլիկիայի Սիս մայրաքաղաքից դեպի Սուրբ Եջմիածին վերահաստատումը: Երկար տարիների դեգերումներից հետո վերջնականապես 1441 թվականին Հայոց Հայրապետական Աթոռը հանգրվանեց աստվածադրոշմ Եջմիածնում, այն տեղում, որը հաստատվել էր սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից: Պատմության ծանր թելադրանքների հետևանքով Հայրապետական Աթոռը տեղից տեղ էր փոխադրվել՝ Դվին, Անի, Արգինա, Հռոմկլա, Սիս, բայց երբեք հայ մարդու սրտից չէր վերացել Մայր Աթոռ Սուրբ Եջմիածինը, որը հայերիս համար Հայոց Ձիթենյաց լեռն է, երկնքի և երկրի հանդիպման վայրը: Ուստի այս մտածումներով ամեն ժամ աղոթենք Տիրոջը՝ ասելով. «Տէր, միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեաց»: ամեն:

Ալբերտ սարկավազ ՍԱՀԱՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՄԱՍԻՆ

(քաղված՝ Ղուկասի Ավետարանի մեկնությունից)

«Ապա նրանց տարավ հանեց մինչև Բեթանիա և, բարձրացնելով իր ձեռքերը, օրհնեց նրանց»:

Ղուկաս 24:50

Նրանք այդ ժամանակ գտնվում էին Երուսաղեմում, և երբ Հիսուս նրանց երևաց, պատվիրեց քաղաքից դուրս գալ բարձրանալով Ձիթենյաց լեռը, որը գտնվում էր Երուսաղեմի դիմաց: Ինչո՞ւ է Բեթանիայից երկինք համբարձվում, որովհետև «Բեթանիա» նշանակում է սգո և չարչարանքի տուն և խորհրդանշում է այն, որ երբ դրախտից դուրս եկանք, մտանք այս աշխարհ՝ սգի և չարչարանքի տուն: Քրիստոս մեզ մոտ եկավ և մեր սգին ու տրտմությանը հաղորդակից եղավ՝ Ղազարոսի գերեզմանին արտասվելով՝ ցույց տալու համար, որ հանցանքից հետո արժանացանք ողբի և արտասուքի, սակայն Տերն ազատեց Իր չարչարանքներով և մխիթարեց սգով վշտացածներին և առնելով մեր բնությունը՝ համբարձվեց երկինք, ինչպես Ինքն իսկ ասաց. «Ուր ես եմ, այնտեղ կլինի և իմ ծառան» (Հովհ. 12:26):

«Եվ բարձրացնելով իր ձեռքերը, օրհնեց նրանց» (Ղուկ. 24:50): Ձեռքերը բարձրացնելով և աջով օրհնելով՝ մեր աչքերին զորություն տվեց, ինչպես Ղուկասն է վկայում, թե. «Առաքյալները ձեռքերը դնելով մկրտվողների վրա՝ Սուրբ Հոգին էր տրվում նրանց, և հիվանդների վրա դնելով՝ բժշկում էին»: Երանելի շնորհների ինչպիսի՞ մեծության և անչափ օրհնության արժանացան ձկնորսների, մաքսավորների դասերը: Նրանց տրվեց աստվածային բոլոր շնորհները, բարձրագույն աստիճանները, և նրանք էլ մյուսներին տալով՝ փոխանցեցին

նույն պաշտոնը:

«Եվ մինչ նա օրհնում էր նրանց, բաժանվեց նրանցից և դեպի երկինք էր վերանում» (Ղուկ. 24:52): Ըստ հոգեպատում մարգարեության. «Աստված բարձրացավ օրհնության և մեր Տերը շեփոխի ծայնով» (Սաղմ. 46:6), և երկրորդ գրքում այսպես է ասում. «Մինչդեռ նրանք նայում էին, երկինք վերացավ»: Իսկ ինչո՞ւ նրանց աչքի առաջ հարություն չառավ գերեզմանից, սակայն նրանց առջև վերացավ: Որովհետև հարության ավարտը տեսան նշաններով և առաքյալների հետ խոսելով, սակայն սկիզբը ոչ: Իսկ համբարձման սկիզբը տեսան, այլ վախճանը ոչ: Որովհետև Տիրոջը տեսան հարություն առած, նաև գերեզմանի տեղը հայտնի էր, սակայն մարմինն այնտեղ չէր: Եվ աչքերն էլ չէին կարող երկնքի բարձրությունը տեսնել: Թե որ նույն Հիսուսն էր, գիտեին Նրա խոսքերից, որ խոսում էր իրենց հետ, իսկ հեռվից չէին կարող Նրան տեսնելով ճանաչել, այլ երկինք համբարձվելու մասին հրեշտակներից իմացան:

Եվ ինչպես որ Եղիսեն տեսավ իր վարդապետի երկինք բարձրանալը, որպեսզի չասեն, թե Հեզաբելը սպանեց նրան, այդպես էլ աշակերտները տեսան իրենց վարդապետի երկինք համբարձվելը, որպեսզի հրեաները չասեն, թե Քրիստոս հարություն չառավ:

«Եվ ամպը նրան ծածկեց նրանց աչքերից» (Գործք 1:9), որը երկինք համբարձվել էր նշանակում, և ոչ հրեղեն կառքով, ինչպես Եղիան, քանզի նա սոսկ մարդ էր և չէր կարող իր բնությամբ երկինք բարձրանալ: Իսկ Հիսուս, Որ ամեն ինչում զորություն ուներ, ինքնիշխանությամբ բարձրացավ Հոր մոտ, իսկ «ամպը նրան ծածկեց»,

քանի որ Նա բարձրացավ ամպերից վեր, որպեսզի հայտնի դարձնի, ըստ Դավթի ասածի, թե. «Ամպերը հանելով երկրի ծայրերից՝ իր կայծակներն անձրևի վերածեց» (Սաղմ. 134:7): Այստեղ նաև Հոր մասին է ասում, որ աստվածային զորության նշանն



է, քանզի չկա այլ զորություն, որ կարողանա ամպերի վրայով ընթանալ, և նրանք արթմնի տեսնում էին այդ ամենը: Նույնպես նաև Սինա լեռան վրա, երբ Մովսեսը մտավ ամպի և մառախուղի մեջ և երկինք վերացավ, Տերը ցույց էր տալիս աստվածային փառքը: Եվ նրանք իրենց աչքերով էին տեսնում և հիացել էին, որ մարգարեների պես արժանացան այդպիսի իրողության ակա-

նատես լինել:

«Եվ մինչ իրեն աչքերը հառած նայում էին նրա երկինք գնալուն, ահա նրանց երևացին սպիտակ զգեստների մեջ երկու մարդիկ» (Գործք 1:10): «Սպիտակ զգեստներով», քանզի նույն զգեստներով երևացին գերեզմանի մոտ: Եվ հրեշտակների տեսքը լուսավոր էր, և երևացին մարդակերպ և հանկարծակի: Եվ ինչպես որ ավետաբեր խոսքով զորացրեցին խնկաբեր [կանանց], նույնպես և քարոզեցին Տիրոջ համբարձման ժամանակ: Եվ թեպետ մարգարեները նախապես ասացին ծննդյան, հարության և երկինք համբարձվելու մասին, այստեղ էլ սպասավորում էին Տիրոջը՝ Նրա երկինք մտնելուն, ինչպես որ գլխավոր [հրեշտակները] աղաղակում էին՝ ասելով. «Վեր բաշեք, իշխաններ, դռները ձեր, թող բացվեն հավիտենական դռները, և փառքի արքան թող ներս մտնի» (Սաղմ. 23:8): «Որոնք և ասացին. «Ով գալիլիացիներ, ինչո՞ւ կանգնած նայում եք երկնքին, այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսաք նրա երկինք գնալը» (Գործք 1:11): Հայրենի քաղաքի անվամբ էին հիշատակում նրանց, որպեսզի ասվածն առավել հավաստի լինի: Նաև իրենց մաքրափայլ տեսքով առաքյալներին ցույց էին տալիս, որ իրենք երկնքից են: Եվ ասելով. «Պիտի գա նույն ձևով» պարզեց նրանց երկրորդ գալստյան ստույգությունը, որ գալու է «Հոր փառքով» (Մատթ. 16:27), և նույն մարմնով. «Դատելու ողջերին և մեռելներին» (հմմտ. Բ Տիմ. 4:1), որի թագավորությունն անվախճան է. ամեն:

Փոխադրումը գրաբարից՝
Գայանե ԹԵՐԶՅԱՆԻ

ԴԵՌ ՀԱՌՆԵԼՈՒ Է ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ՝ ԻՐ ԻՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՎ

...1918 թվական: Մայիսի 22-28: Հայոց պատմության էջերում ոսկե տառերով է գրվել այս տարեթիվը: Եվ եթե մեր ազգի անցյալի այս էջը արժանիորեն գնահատելու լինեմք, ապա այն պիտի կոչվի համաշխարհային պատմության ֆենոմեն... Քանի՞ օրինակ գիտեմք, որ երբ սեփական պատմական բնօրրանում ցեղասպանության և հայրենագրկման է ենթարկվում մի ողջ ժողովուրդ, իր կրած տառապանքներից դեռ չնորոգված՝ նա կարողանում է մաքառել թշնամու դեմ և հաղթում է երեք ճակատներով՝ վերակերտելով իր անկախ պետականությունը...

Գրեթե մեկ դար առաջ այս օրերին՝ 1918 թ. մայիսին, թուրքական զորքերը ներխուժեցին Արևելյան Հայաստան, մայիսի 15-ին գրավեցին Ալեքսանդրապոլը, մայիսի 21-ին՝ Սարդարապատ գյուղն ու կայարանը: Մարտերը ընթանում էին 3 ուղղություններով՝ Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաբիլիսա: Մայիսի 22-ին սկսվեց Սարդարապատի ճակատամարտը: Հայրենիքի և երևանի պաշտպանության համար ոտքի ելավ ամբողջ հայ ժողովուրդը: Եվ հաղթեց... Հառնեց Հայոց պետականությունը՝ կազմավորվեց Հայաստանի Հանրապետության խորհրդարանը և կառավարությունը, վարչապետ նշանակվեց Հովհաննես Բաջազյանին, մայրաքաղաք հռչակվեց Երևանը...

...1918 թվականին, երբ թշնամին ներխուժում է Արարատյան

դաշտ և գրավում Սարդարապատից 10 կմ հեռու գտնվող «Արաքս» կայարանը, որով անցնում էր Ալեքսանդրապոլ-Երևան երկաթգիծը, հայկական զորքերի երևանյան զորախմբի հրամանատար գեներալ Մովսես Սիլիկյանը, Երևանի ապագա պարետ Շահխաթունու ուղեկցությամբ, այցելում է էջմիածին: Ամենայն Հայոց

պանել Մայր Աթոռը: Մեր ազգային գոյապայքարի դաշտում հնչում է նրա մարտակոչը. «Ազգ հայոց, թուրքը՝ մեր բանական հոտի դարավոր թշնամին, նվաճել է Ալեքսանդրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի, մեր կենսագրության: Գալիս է Արարատյան երկրի վրա: Թուրքը, կոտորած ու ավեր

մու առաջխաղացումը կասեցնել, եթե ի գործու չէ փրկելու մեր սրբությունները, ապա ես ինքս սուր կվերցնեմ և կընկնեմ Մայր Տաճարի գավիթում, բայց չեմ հեռանա պապերից ավանդ մնացած Սուրբ աթոռից:

Իսկ եթե եկել է վերջը, ապա այն ինչո՞ւ չընդունենք պատվով ու քաջությամբ, և ո՞չ թե ողորմելի ստրուկի պես ոսոխի առաջ սողալով: Մեր պատմության անցյալ դարերը լիքն են քաջությամբ՝ ներկված նահատակների արյամբ: Դրանով չի սպառվել մեր արյունը և ուժը: Դարեր շարունակ հայ ազգն ապրել է ինքնության համար պայքարելով: Դրա համար է, որ զանգվածային կոտորածներով հարուստ մեր կենսագրությունը չի ունեցել և չի ունենա վերջին վերջակետ: Ուրեմն էլ ինչո՞ւ ազգովին չբարձրանանք թշնամու դեմ, որը գալիս է ծառավ մեր վերջին արյունին»:

Սարդարապատի հերոսամարտի ակտիվ մասնակիցներից էր Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանը (հետագայում՝ Գարեգին Ա Հովսեփյան. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո): Գլխավորում էր դարաբաղցիներից բաղկացած հինգերորդ գունդը, որը ստացավ «Մահապարտներ» անվանումը...

...Մեր գոյապայքարի զանգերը այսօր էլ չեն լռել: Մեր Սարդարապատը շարունակվում է հոգևոր դաշտում, երբ ազգային պետությունների ու մշակույթների դեմ ուղղված են բազմաթիվ մարտահրավերներ: Մեր հոգևոր-մշակու-

թային ժառանգությունը, մեր անցյալի իմաստուն հայրապետների թողած պատմական դասերը մեզ համար պիտի դարձնենք ամուր վահան՝ մեր Հայրենիքը ամենից առաջ մեր հոգևոր դաշտում կառուցելով: Ո՞րն է լինելու մեր ուղին դեպի պատմական արդարության վերականգնում՝ դեպի թշնամու կողմից բռնազավթված Արցախի վերազատագրում... Ահա՛ պայքարի բանաձևերից մեկը, որը հնչեցնում է մեր մեծագույն ու իմաստուն հոգևոր հայրերից մեկը՝ Գևորգ Զ Զորեքչյան կաթողիկոսը. «Հայրենիք ունեցող ազգը, որպեսզի կարողանա ինքնուրույն և անկախ ապրել, և իր հոգեկան ուժերը ազատ դրսևորել ու զարգացնել, պիտի ունենա նաև ազատ ու անկախ հայրենի պետություն»:

Հայոց Հայրապետի գաղափարները ազատ ու անկախ, իր պատմական իրավունքներին հետամուտ Հայաստան-պետություն ունենալու մասին էին, որոնք նա համարձակորեն հնչեցնում էր խորհրդային տարիների ամենաբարդ շրջանում: Նա ապագա անկախ պետությունը պատկերացնում էր Հայաստան-Սփյուռք ամուր ու անբաժան կապով և ինքն էլ մեծ ավանդ ուներ 1946-1948 թթ. հայրենադարձության կազմակերպման գործում, ամագան 1945 թ. ապրիլի 19-ին Մոսկվայում Ի. Ստալինի հետ հանդիպման ժամանակ բարձրացրել էր Արևմտյան Հայաստանի հարցը... ➔ էջ 8



Հայ կամավորները մարտից առաջ ստանում են Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի օրհնությունը, 1918 թ.

կաթողիկոս Գևորգ Ե կաթողիկոսին նա առաջարկում է անվտանգության համար տեղափոխվել Սևանա լճի շրջան: Կաթողիկոսը պատասխանում է կտրուկ մերժողական... Հայոց հովվապետը հրամայում է օր ու գիշեր հնչեցնել բոլոր եկեղեցիների զանգերը և ոտքի հանել ժողովուրդին: Երդվում է հանընդհանուր նահանգի դեպքում անգամ մնալ Սուրբ էջմիածնում ու անձամբ պաշտ-

փելով՝ գալիս է, և մեր զորապետներն էլ այլ ելք չեն գտնում այդ աղետից, քան հայոց հայրապետին փախուստի մղել: Նրանք ինձ առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր Աթոռ Սրբ. էջմիածինը, մեր սրբարանը, հայ ժողովրդի վերջին կտորը:

Ո՞չ և ո՞չ: Հազար անգամ ո՞չ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդ մնացած Մայր Աթոռը: Եթե հայ ժողովուրդը չի կարող թշնա-

ԹԱՔՐՈՐ ԼԵՌԱՆ ԼՈՒՅՍԸ

յն պահերին, երբ Տեղը լցնում է մեր հոգին իր հետ մերձ լինելու զգացողությամբ, Նրա անսահման ողորմածության և մեր կատարյալ անարժանության կենդանի գիտակցությամբ, երբ ջերմ աղոթքի կամ Սուրբ Հաղորդությունը ընդունելու պահին մենք զգում ենք մեզ կարծես թե ամեն երկրային բանից վեր և ավելի մոտ երկնայինին, ցանկություն և պահանջ է առաջանում միշտ մնալ այդ զգացողության մեջ: Եվ մեզ թվում է, թե մենք երբեք չպետք է վերադառնանք երկրային վիճակին, ինչպես Պետրոսը, երբ Թաքոր լեռան վրա տեսնելով Տիրոջ Փառքը՝ ասաց. «Տե՛ր, լավ է, որ մենք այստեղ ենք. եթե կամենաս, երեք տաղավարներ շինեմք...» (Մատթ. 17. 4):

Ցավոք, անհնարին է հարատև պահպանել նման հրաշալի տրամադրությունը, դա մեր հոգու համար կրկանում դժվար տանելի է: Սակայն մենք չպետք է անհանգստանանք և չափից ավելի նյարդայնանանք, երբ կյանքը, իր անխուսափելի շփոթմունքներով, գաթակղություններով և վայրկվերումներով հեռացնում է մեզ այդ պայծառ զգացումից, այլ պիտի հավատանք, որ Տեղը մեզ կրկին կառաջնորդի դեպի Թա-

քոր լեռը, կրկին կուղարկի մեզ Իր շնորհը: Առօրյա կյանքում մարդկանց հետ ունեցած հարաբերությունները, երկրային տարբեր զբաղմունքները մեզ ամենակին չեն հեռացնում Նրանից, ինչպես որ երբեմն թվում է մեզ և հենց այդ շփման պահերին է ամհրաժեշտ, որ մենք յուրաքանչյուր գործի, մարդկանց նկատմամբ ունեցած մեր վերաբերմունքի մեջ ներդրենք աղոթական տրամադրության այն մասը, որը բարձրացնում և մաքրում է ամեն ինչ, չբացառելով մույնիսկ ամենամանջան ու ամարժեք թվացող բաները:


Թեև Նրա Արքայությունը տեսանելի կերպով դեռ չի հայտնվել, բայց, անշուշտ, գոյություն ունի: Նա ցույց տվեց դա Իր աշակերտներից երեքին՝ Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին, երբ ամբողջ Փառքով երևաց Թաքոր լեռան վրա: Ինչպես այն ժամանակ, Թաքոր լեռան վրա, մույնպես և հիմա, հավիտենական կյանքի լիակատար գիտակցությունը կարող է խորապես ներթափանցել մեր հոգուց ներս, և այդ երանելի պահերին մենք կարող ենք զգալ, որ ժամանակը չի կարող չափից առավել երկար տևել մեզ համար, քանի որ մենք ծնվել ենք հավիտենության համար, որի համեմատ ժամանակը չափա-

զանց կարճ է:

Հաշվի առնենք այն, որ մենք մահկանացու մեր մարմնով դեռ այս ժամանակավոր կյանքի իրականության մեջ ենք ապրում ու չենք կարող ժառանգել Երկնքի Արքայությունը, եթե չվերափոխվենք, դառնանք պայծառ, մաքրված և անբիծ, որովհետև միայն

պայքարելու ու հաղթելու ուժ չգտնելով:

Մեր Տե՛ր Հիսուս Քրիստոս, լինելով եկեղեցու Գլուխը, աստվածային գործությամբ հաղթեց այս աշխարհի թշնամուն և իշխանություն ու հաղթելու գործություն տվեց Իր Մարմնի բոլոր անդամներին: Եթե անգամ երկար ժամանակ



Թաքոր լեռ

այդ ժամանակ կարող ենք մտնել Տիրոջ Փառքի մեջ և մշտապես տեսնել Նրա լուսավոր երեսը: Սակայն ինչպե՞ս մաքրվենք և կատարյալ դառնանք, եթե մենք մեր անձերի և չարի անտեսանելի ուժերի հետ մշտապես պայքարի մեջ հաճախ պարտվում ենք և հուսահատվում՝ մեր մեջ այլևս

անցնի, մինչև որ Նրա Զորությունն ու Փառքը հայտնվեն Իր Մարմնի անդամների մեջ, այսինքն մեր Նրա Արյամբ զնվածների մեջ, մենք չպետք է կորցնենք մեր հույսը և հանապազ պիտի կրկնենք «Տերունական աղոթք»-ի հետևյալ խոսքերը. «Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւի-

տեանս...» (Մատթ. 6.9-13):

Ուժ գտնենք մեր մեջ և չարի դեմ պայքարում մեր հայացքներն ուղղենք դեպի երկնավոր Թագավորը, Տիրոջով հաղթահարենք մեր մեջ եղած թերություններն ու անկատարությունները՝ համբերատար սպասելով վերջնական և կատարյալ հաղթանակին: Եթե մենք մեր սիրտը՝ բնությանը ինքնական և եսասեր, կարողանանք ամբողջությամբ հնազանդեցնել Աստծո կամքին, եթե թույլ տանք, որ այնտեղ բնակվի ամեն բանի Տե՛րն ու Թագավորը, ապա այդ սրտում կգործի նաև Իր գործությունը: Այնտեղ, որտեղ որ Նա թագավորում է՝ գործում է Իր ամբողջ ուժով և գործությամբ, և այնտեղ, որտեղ որ Իր Զորությունն է՝ այնտեղ էլ Իր Փառքն է: Վերափոխենք մեր սիրտը, թողնենք վերջապես, որ այն դառնա Աստծո Արքայության բնակավայր՝ հավիտյան վերառաքելով Նրան փառք, պատիվ և երկրպագություն: Միայն այդ ժամանակ կարող ենք փայլել այն լույսով, որով փայլում էր Աստծո Որդին Թաքոր լեռան վրա և Նրա նմանությամբ կստանանք երկնաքաղաքացի լինելու հավիտենական Պատիվն ու Փառքը:

Գայանե ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԱՅՆԸ

«Պատրաստեցե՛ք Տիրոջ ծանապարհը և հարթեցե՛ք մեր Աստծու շավիղները... Պիտի հայտնվի Տիրոջ փառքը, և ամեն մի մարմնավոր պիտի տեսնի Աստծու փրկությունը, քանզի Տերը խոսեց»:

Եսայի 40.3-5

Քրիստոնեական եկեղեցու առավել նշանակալից և սրբազան դեմքերից մեկը, ով կանգնում է Հին և Նոր Կտակարանների միջև՝ որպես վերջին մարգարե և առաջին քրիստոնյա վկա, հիմնարար նշանակություն ունի հոգևոր նորոգում և Աստծու հետ հաղորդակցություն որոնող անհատի կյանքում:

Նրա ծայրը խորհրդանշել է այն բոլոր ծայրերի, որոնք բարձրանում են աշխարհի աղմուկից և ուշադրություն են պահանջում: Սա այն ծայրն է, որը չի հարմարվում ժամանակի սովորություններին, չի փորձում հաճել ունևորներին, այլ պարզ ու անկեղծ հայտարարում է ճշմարտությունը: Թեպետ եկեղեցական աստվածաբանությունը սովորաբար խուսափում է մարգարեների համեմատականից, այնուամենայնիվ արձանագրվում է, որ աստվածաշնչյան բոլոր մարգարեներից վերջինն ամենամեծ հետքն է թողել քրիստոնեության պատմության մեջ: Ըստ Ղուկաս ու Հովհաննես ավետարանիչների՝ ժամանակակիցները նրան նույնիսկ չփոթել են Քրիստոսի հետ:

Բոլոր ավետարանիչները գրում են սուրբ Հովհաննես Մկրտչի ծննդյան ու գործունեության մասին, ավելին՝ ավետարանիչները վստահ են, որ նրա մասին վկայել է հինկտակարանյան Եսայի մարգարեն ասելով. «Անապատում կանչողի ծայրն է. «Պատրաստեցե՛ք Տիրոջ ծանապարհը և հարթեցե՛ք մեր Աստծու շավիղները: Բոլոր ձորերը պիտի լցվեն, և բոլոր լեռներն ու բլուրները պիտի ցածրանան, դժվարին տեղերը պիտի դյուրին դառնան, և առապարները՝ դաշտեր: Պիտի հայտնվի Տիրոջ փառքը, և ամեն մի մարմնավոր պիտի

տեսնի Աստծու փրկությունը, քանզի Տերը խոսեց» (Եսայի 40.3-5): Ահա հենց սուրբ Հովհաննեսին էր վիճակված պատրաստել Տիրոջ ծանապարհը և հարթել Նրա շավիղները, ուստի ավետարանիչները գեղագիտական առանձնահատուկ բառապաշարով են գրում Մկրտչի մասին. «Կար մի մարդ՝ Աստծուց ուղարկված. Նրա անունը՝ Հովհաննես: Սա եկավ որպես վկա, որպեսզի վկայի լույսի մասին, որ բոլորը նրա միջոցով հավատան: Ինքը լույսը չէր, այլ եկել էր, որ վկայի լույսի մասին: Այդ լույսն էր ճշմարիտ լույսը, որ լուսավորում է ամեն մարդու, որ գալու է աշխարհ» (Հովհաննես 1.6-9): Ահա Լույսին՝ Քրիստոսին, նախորդելու այս հանգամանքը պատճառ է հանդիսացել Հովհաննեսին տրվող մեկ այլ անվանման՝ Հովհաննես Կարապետ (Նախակարապետ), որ նշանակում է «առաջնորդ»: Հովհաննես Մկրտիչը, որը պիտի մկրտեր համայն մարդկության Փրկչին, Հիսուսի աշխարհ գալու համար ցնծացել է դեռևս Նրա ծննդից առաջ: Ավետարանիչը վկայում է, որ երբ Աստվածամայրն այցելում է Եղիսաբեթին՝ սուրբ Հովհաննեսի մորը, վերջինս, լցվելով Սուրբ Հոգով, բացականչում է. «Որտեղի՞ց ինձ այս ուրախությունը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մոտ գա. որովհետև ահավասիկ, երբ թո ողջույնի ծայրը հասավ իմ ականջին, մանուկը ցնծալով խաղաց իմ որովայնում» (Ղուկաս 1.43-44):

Հովհաննեսի ծայրը չէր նմանվում այն ուսուցիչների ծայրին, ովքեր քարոզում էին տաճարներում և ժողովարաններում: Նրա ծայրը բխում էր անապատի լռությունից, որտեղ նա երկար տարիներ անցկացրել էր Աստծու հետ հաղորդակցության մեջ: Դա անմիջական, անկեղծ և զորավոր ծայր է, որը թափանցում էր մարդկային սրտի խորքերը:

Անապատները միայն ավագոտ տարածքները չեն: Անապատ է ցանկացած տեղ, որտեղ մարդը մենակ է մնում իր խղճի հետ: Անապատ է ցավի և կյանքի

դժվարությունների մեջ գտնվելու պահը: Անապատ է ներքին փնտրտուքի և հոգևոր անհամապատասխանության վիճակը: Եվ այսօր էլ՝ հենց այս անապատներում շարունակում է հնչել այդ նույն ծայրը: Ծանոթ չե՞ք այն պահը, երբ կյանքի աղմուկի մեջ հանկարծ լսվում է մի ներքին ծայր, որը կանչում է մեզ դեպի ճշմարտություն: Դա Անապատում կանչողի ծայրն է՝ մեր ժամանակում,



մեր սրտերում, որի հիմնական ուղերձն ապաշխարությունն է: Բայց ապաշխարությունը միայն զղջալը չէ. այն նաև կյանքի ուղղության փոփոխություն է: Անապատի ծայրը կանչում է մեզ դադարեցնելու սովորական ընթացքը, վերլուծելու մեր կյանքը և որոշելու՝ արդյոք մենք ճիշտ ուղղությամբ ենք գնում: Անապատում կանչողի ծայրի մեկ այլ կարևոր ասպեկտը պատրաստության կանչն է: «Պատրաստեցե՛ք Տիրոջ ծանապարհը» նշանակում

է, որ մենք պետք է ակտիվ դեր խաղանք մեր հոգևոր կյանքում: Մենք չպետք է պարզապես սպասենք, որ Աստված գա և փոխի մեր կյանքը. մենք պետք է պատրաստենք մեր սրտերը Նրան ընդունելու համար: Սա նշանակում է բարձրությունները հարթել մեր հպարտությունը և ինքնամոլությունը: Սա նշանակում է ծայրերը լցնել մեր հոգևոր թերությունները: Սա նշանակում է ուղիղ դարձնել կորալին ծանապարհները մեր չարությունները և սխալ ըմբռնությունները: Անապատում կանչողի ծայրը լսելու համար մենք պետք է սովորենք լռել: Մեր աշխարհը լցված է աղմուկով՝ մեղիայի, տեխնոլոգիաների, անդադար խոսակցությունների: Բայց Աստծու ծայրը հաճախ իր բնույթով նույն է և պահանջում է մեր ամբողջական ուշադրությունը: Երանյալ է նա, ով ծանապարհի աղմուկի մեջ կարողանում է լսել լռության ծայրը և աշխարհի չափազանց վառ լույսերի մեջ տեսնել Աստծու փափուկ ճառագայթները: Իմաստուն է նա, ով ունակ է ձևավորել իր ներսում այն անապատի լռությունը, որտեղից կարող է լսել Կանչողի ծայրը:

Անապատում կանչողի ծայրը հույս է առ այն, որ Աստված չի մոռանում իր արարածներին և դեռևս խոսում է նրանց հետ: Դա նշանակում է, որ անկախ խալներից և թերություններից, Աստված շարունակում է կանչել մարդուն:

Այս Սրբազան Զայրը յուրաքանչյուրիս հիշեցնում է, որ մենք ունենք հնարավորություն սկսել նորից, փոխել մեր կյանքի ուղղությունը և բանաճարակվել Աստծու մեծ ծրագրին:

Արդ, մի քիչ լռենք մեր բուռն կյանքում, գտնենք մեր ներքին անապատը, որտեղ Աստված սպասում է մեզ: Եվ երբ լսենք Նրա ծայրը, կունենանք քաջություն՝ լիակատար պատրաստվածությամբ Նրան ընդառաջ քայլելու և Նրանից բխող օրհնյալ լույսով նորոգվելու:

Լաուրա ԱՐԱՋԱՆՅԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ



այաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Համբարձման չորրորդ օրը տոնախմբում է Երկրորդ Ծաղկազարդը, որն ըստ ավանդության կարգված է սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից: Սուրբ Գրիգոր Լուսավորիչը տասներեք տարի շարունակ գտնվում էր վիրապում, և Աստված նրան մխիթարում էր չորրորդ դասի զվարթումների միջոցով: Եվ երբ մոտենում էր Աստծուն երկրպագելու պահը, հրեշտակները սրբից հեռանում էին Տիրոջ երկրպագելու և անմիջապես վերադառնում նրա մոտ: Սակայն համբարձման չորրորդ օրվա նախօրյակին, երբ նրանք սովորականի պես գնացին Աստծուն երկրպագելու, վերադարձան միայն հաջորդ օրը և իրենց ուշանալու պատճառը բացատրեցին հետևյալով: Երբ Քրիստոս կատարեց Իր բոլոր տնօրինությունները և համբարձվեց, հաջորդ ինը օրերին հրեշտակների ինը դասերում եղավ և յուրաքանչյուր դասում մի օր հանգստացավ: Յուրաքանչյուր դաս ցնծությամբ և ուրախությամբ ընդառաջ էր ելնում ու Նրա պատվին տոն կատարում, և Տերը նրանց հաստատում էր ու հայտնում Իր մարդեղության խորհուրդը: Իսկ չորրորդ օրն իրենց դասում հանգստացավ և այդ պատճառով ամեն տարի իրենց դասը այդ օրը տոն է կատարում: Այդ օրը մեծ ցնծության մեջ էին հրեշտակները, որովհետև նրանք մարմնով տեսնում էին Նրան, Ուն չէին կարող տեսնել աստվածությամբ, նրանք ուրախ էին նաև մարդկային բնության դարձի համար, ինչպես նաև այդ օրը վերցրեց

նրանց վրայից այն ամոթը, որը կրում էին իրենց ազգակից սատանայի պատճառով մարդկային ցեղին մոլորեցնելու համար: Վարդապետներն ասում են, թե նրանք երկյուղի մեջ էին, որ հանկարծ իրենք նույնպես չընկնեն մյուս հրեշտակների մեջ, մինչև որ Տերը եկավ և վերացրեց նրանց երկյուղը:

Այդ տոնը «Երկրորդ Ծաղկազարդ» է կոչվում, և մենք մտքով ու օրվա խորհրդական պաշտամունքով մասնակցում ենք հրեշտակների տոնին: ...Առաջին Ծաղկազարդի տոնը կիրակի տոնում, որը տեղումնի օր է, որովհետև կիրակի օրն է լինելու համընդհանուր հարությունը, և այդ օրը լինելու է առանց երեկոյի: Սաղմոսելը «Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն», Առաջին գալստյան բարեբանությունն է, իսկ՝ «Օրհնեալ, որ գալոց ես», Երկրորդ գալուստն է խորհրդանշում, երբ աստվածաբար գալու է Տերը՝ Հոր փառքով, և բոլոր հրեշտակները Նրա հետ՝ հատուցելու յուրաքանչյուրին ըստ իր կատարած գործերի:

Առավոտյան ժամերգությանը «Տեր յերկնից» շարականը երգելիս քահանաները զգեստավորված ելնում են առյաճ՝ խաչով, Ավետարանով և բոլոր զարդերով հանդերձ, որը խորհրդանշում է Տիրոջ Առաջին գալուստը, իսկ տասներորդ ժամին՝ Դոմբացեքի ժամանակ, խաչով ու խաչվառով ելնելը Երկրորդ գալստյան խորհուրդն ունի:

Տերն այսօր Երուսաղեմ գալով՝ դնում է Իր փրկագործության սկիզբը, որի մասին մարգարեն ասում է. «Սա է օրն այն, որ Տերն

ստեղծեց, եկեք ցնծանք և ուրախանանք այսօր» (Սաղմ. 66.24): Նաև՝ «Մեր Տեր Աստվածն երևաց մեզ, կատարեցեք տոնն ուրախության մատուցող ճյուղերով՝ մուտքից մինչև անկյունները սեղանի» (Սաղմ. 66.27): Վարդապետներն ասում են՝ Քրիստոս եկավ Երուսաղեմ, որպեսզի ցույց տա, որ Ինքն է Աստծու Գառը, Ով կանչում է պատարագվել մարդկանց փրկության համար: Ինչ և Երկրորդների հիմքը դրեց:

«Օվսաննա՛ Բարձրալիք, օրհնյալ լինի Նա, որ գալիս է Տիրոջ անունով» (Մարկ. ԺԱ 11): Այսինքն՝ փրկություն բարձրանքներից, կամ՝ «Փրկիր ու ապրեցրու»:

Ղազարոսի հարության համար էին Նրան «Փրկիչ» ու «Ապրեցնող» անվանում: Եվ դարձյալ հարցնում էին՝ Ո՞վ է Սա, և պատասխանում էին. «Սա Նա է, Ով առաջ, քան հավիտյանները ծնվեց Հորից և այժմ եկել է աշխարհ»: Հարցնում են՝ Ով է Սա, և պատասխանում են. «Սա Նա է, Ով Մովսեսի խաչանիշ գավազանով պատռեց ծովն ու այնտեղով անցկացրեց Իսրայելի ժողովրդին, իսկ Փարավոնին իր զորքերով խորտակեց ծովում»: Դարձյալ ասում էին՝ «Օվսաննա՛, այսինքն՝ Սա Նա է, ով քառասուն տարի երկնքից հաց տեղաց, դրանով կերակրեց մեր հայրերին անապատում... և բոլորը միաբան ասում էին. «Օրհնյալ է մեր հոր՝ Դավթի թագավորության Թագավորը»: Նրան ճանաչեցին որպես մշտնջենավոր Աստված, այդ պատճառով էլ Նրան «Դավթի որդի» ու «Տեր» դավանեցին՝ ըստ այս խոսքի. «Հեսեթի արմատից գավազան պիտի ընձյուղվի, ծաղիկ պիտի բուսնի այդ

արմատից (Եսայի ԺԱ 1), «Նա պիտի նստի Դավթի աթոռին, առաջ պիտի տանի նրա թագավորությունը» (Եսայի Թ 7):

Այս գալուստը կանխատեսել էին մարգարեները, այդ մասին քահանաները միշտ ընթերցում էին տաճարում, և բոլորը սպասում էին այդ աստվածային գալստյանը, ինչի համար էլ ասում էին. «Խաղաղություն երկնքում և փառք բարձունքներում...»: Տերը երկնքից իջնելով՝ խաղաղություն հաստատեց մարդկանց մեջ: Քանի որ Նա է Տերը երկնավորների և երկրավորների, և երկուսի համար էլ Մի Աստված է ու Մի Թագավորություն: Նա հաշտեցրեց Հորն արարածների հետ և այսպիսով խաղաղություն հաստատեց մարդկանց և հրեշտակների միջև:

Մատթեոս ավետարանիչն ավելացնում է. «Այս բոլորը եղավ, որպեսզի կատարվի մարգարեի խոսքը, որ ասում է. «Ասացեք Սիոնի դարերը, ահա դեպի քեզ է գալիս թո Թագավորը՝ հեզ և նստած էշի ու էշի քուռակի վրա» (Մատթ. ԻԱ 4-5): Ինչպես Տերը Սուրբ Հոգուն առաքեց առաքյալների դասերի վրա և նրանց լցրեց շնորհներով, մենք ևս ակնկալում ենք ստանալ Սուրբ Հոգու բազմաբաշխ պարգևներն ու առատաձիր շնորհները: Հույժ կարևոր է հրեշտակաց դասերով Քրիստոսի նման երկինք հառնենք, քանզի Տիրոջ մուտքը Երուսաղեմ մի նոր օրհնություն էր ծաղկազարդելու, մաքրագարդելու մեր հոգիները:

Պատրաստեց
Ծաղկանուշ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

ԱՂՈԹՔ



Եր հոգու տրտմության ստվերները հեռացնելու, մեզ տանջող ցավերը բժշկելու, մեր փափագած լույսին հասնելու ներգործուն միջոցը աղոթքն է: Անշարժ Վեմի վրա հաստատող, թեթև հովերից երերացող վարքից իսկույն ազատող ու Հիսուսի կատարյալ ուրախության մեջ ամփոփող զորությունը աղոթքն է:

Դու կատարյալ մարդու օրինակին հասնելու փափագ ունե՞ս: Քո օրինակը Հիսուսն է: Նրա շուրթերից է Շնորհի հոսում (Սաղմ. 45.2): Նմանությանը հասնելու միակ ճանապարհը աղոթքն է:

Լուսավորիչ հայրը աղոթքով ապրեց խոր Վիրապում: Դրա համար էր հաճախակի անուշաբույր օծությունների մեջ հայտնվում:

Քո աղոթքի պատասխան շնորհով Սուրբ Հոգի Աստված քո մեջ Հիսուս կհայտնագործի:

... Աղջիկս մեկուկես տարեկան թռնիկիս, որ առայժմ ընդամենը երեք բառ է պարզ արտաբերում՝ պապա, մամա, տատա, ասում է՝ Լուսի՛, աղոթիր: Լուսին գլուխը կախում է ու երկու ձեռքը միացնում իրար: Դրա համար է Լուսիիս երեսը մշտապես ժպտում: Նրա աչքերի կայծը չի անհետանում. . .

Ոգիա թագավորը որ օրը Աստծուն փնտրեր, հաջողություն էր գտնում (Բ Մնաց. 26.5):

Լուսի, այսինքն՝ լուսավոր, Լուսին մերծ: Փորձենք ըմպել՝ «Նրանց հրեշտակներն ամեն օր են տեսնում Իմ հոր երեսը, ով երկնքում է» (Մատթ. 18.10) Աստծո օրհնության Կենաց ջուրը:

Մենք ասում ենք՝ «Քո արքայությունը շուտ գա», մենք ի՞նչ ենք ուզում: Ե՞րբ գա. մի կես ժամից, թե՞ վաղը նկատի ունենք: Մենք նույն պահին ենք ուզում:

«Երբ ժողովուրդները մեկը մյուսին ասացին՝ գնանք Աստծո տուն՝ աղոթելու, Տերն ասաց՝ Ես էլ պիտի գնամ» (Չաք. 8.21): Ե՞րբ, իհարկե, նույն ժամին: Մենք դեռ չհասած, Նա այնտեղ է: Երբ մենք խոսում ենք, Նրա սիրտը ցնծում է և Կենաց զորությամբ մեզ պարուրելով՝ ավելի ու ավելի է բարձրացնում:

Մեր խոսքում եղող սերն ինչպես է ձգվում Հիսուսին: Քո Անունը իմ շուրթերին ցնծությամբ պիտի հնչի (Սաղմ. 63.5), Նրա մասին մտածումներս քաղցր պիտի լինեն (Սաղմ. 104.34): Սա արդեն սրբարար օրհնություն է:

«Աստված ձեր սրբարանը պիտի լինի» (Եսայի 8.14)

Հինգն անց կեսին հերթապահ ավտոբուսը քաղաքային երթուղիների վարորդներիս աշխատանքի էր տանում: Եղ ժամին ո՞նց հաց ուտես: Հակառակի նման ընդմիջման համար էլ ժամանակ չգտա: Երեկոյան գլխացավով ու հոգնած տուն հասա: Պիտի հաց ուտեի ու հանգստանայի և՛ վերջ: Ամեն ինչ տեղը կընկներ:

Չէ, ես այդպես չվարվեցի. . . Հիսուսի Հոգու իրեն ձգող շունչը ինձ հպվեց, խենթացրեց: Բա Աստված ո՞նց է սրբացնում, բժշկում: Մեկին ձեռքով դիպավ, մյուսին խոսքով ասաց. . . «Բանը Աստծո մոտ էր, Բանը Աստված էր» (Հովհ. 1): Չէ, հա: Խոսքով ասաց և բուժվեցի՞ն: Աստծո Խոսքը բուժելու զորություն ունի՞: Դե, եթե այդպես է, ես ինչու՞ եմ ստեղծվածների՞ն՝ հացին ու ջրին նայում ու հոգնածությունից մարում:

Եսպիսի խենթ ու խելամ մտածումներով աղոթքի կանգնեցի: Շնորհալի Հայրապետիս «Հավատով խոստովանիմ»-ն ասացի՝ զգաստությամբ, զգուշությամբ, Լուսիիս նման խոնարհված ու երկինք պարզված հայացքիս մեջ թռնիկիս աչքի սիրո կայծով. . . Մի փոքր առաջ կարդացի Հովհան Մանդակունու «Ամենակին մի՛ երդվեք»-ի մեկնությունը: Ուղղակի ցնծությունս զսպելու իմ «այո»-ն ասեմ՝ գլխացավս դեռևս աղոթքի պա-

հին անհետացավ իսպառ, հոգնածությունս այնպես անհետացավ, ասես նոր էի երկար, անխռով քնից արթնացել:

Այդ աստվածային օրհնության փորձառությունից հետո ծանր կամ դժվարին դեպքերում Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ» աղոթքով եմ Տիրոջը դիմում: Ամեն ինչ տեղն է ընկնում: Երկնավոր Հոր հետ այդ սքանչելի հանդիպումից հետո անձս աստվածային փառքի այնպիսի երկնային ցնծություն ապրեց, որ ես ամբողջության մեջ հասկացա, թե Աստված մեր Հայրն է, և թե ինչ է իրապես Հայր Աստծո խնամքը, որ երկրավոր ամեն ծնողի խնամքի հանդեպ բացարձակ գերազանցություն ունի:

Երանությանս մեջ Եսայի մարգարեին հիշեցի.

-Մի մանուկ տրվեց մեզ, Մի որդի ծնվեց... Նրա անունն է՝ Սքանչելի...

Դարձյալ սքանչացունով հիշեցի Մանուելին տրված Աստծո հրեշտակի պատասխանը. «Իմ անունն ին-



չու՞ ես հարցնում, որովհետև այն Սքանչելի է» (Դատ. 13.18)

Սուրբ Հակոբ Սժբենցին զգուշացնում է. «Աղոթքը հստակ մտքով և սրտի սրբությամբ թող լինի»: Երբեմն, երբ հազար ու մի քամիներից փոթորկված եմ լինում, աղոթքի վստահությունս երերում է... Ասում եմ՝ Լուսի՛, աղոթիր: Գլուխը կախում է թռռ ու ձեռքերը կրծքին դարսում: Մտածեցիր, թե երեխայի խա՞ղ է: Զգու՛շ, բարեկամ: «Մարդու հոգին Աստծո լույսն է, հոգու խորքերն է քննում» (Առ. 20:27): Քննում է, որ Լուսիիս կարիքները հասկանա...

«Մենք դեռ չխոսած, Տերը գիտի, թե մեզ ինչ է պետք» (Մատթ. 6:8):

Առավել ևս, գիտի որ Լուսիիս անխռով աճի համար խաղաղություն է պետք և... մի քիչ էլ քաղցր, մայրական կաթիկ:

Արամայիս ՇԻՄԱԼՅԱՆ



ՄԵՎԱԴԱ ՀԱԿՈՒՅԱՆՆ ՈՒ ՆԵԼԼԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ

Էջ 4 ←

Ամուսինները ներդաշնակ, դրախտային բառերով են բնութագրում իրենց ընտանիքը, որտեղ իշխում է Աստծո սերը: Նրանց երազանքն է մշտապես միասին լինել և ընտանիքի յուրաքանչյուր անդամի տեսնել առողջ ու երջանիկ: Նաև երազում են, որ իրենց դուստրերն էլ ունենան նման կայացած ընտանիքներ: Եվ անգամ արու զավակի բացակայությունը զրուցակիցներիս չի խանգարում երջանիկ լինել, քանի որ աղջիկների հետ կարողանում են քննարկել ցանկացած հարց և նրանցից ստացած սիրով ու ջերմությամբ փակել բոլոր բացերը:

Պարոն Հակոբյանը համոզված է՝ դրախտի ընտանիքը հասարակության բոլոր շերտերին իր լավագույն հատկանիշերով օրինակ ծառայող ընտանիքն է՝ տան բոլոր անդամներով հանդերձ:

Տիկին Սարգսյանը Աստծո պարգև է համարում նման ընտանիք ունենալը և մաղթում, որ մեր դրախտային հայրենիքում դրախտային ընտանիքները շատ լինեն: Պարոն Հակոբյանն էլ եզրափակում է. «Ընտանիքներում ցանկացած խնդրի առաջանալուն պես պետք է արագ լուծում տալ դրան՝ միմյանց զիջելով ու ներելով, ոչ թե միանգամից ամուսնալուծության մասին մտածելով: Ամուսնալուծությունն ամենամեծ ցանկալի տարբերակն է ընտանեկան խնդիրների լուծման ճանապարհին: Մեր բոլոր ջանքերը պետք է գործադրվեն ընտանիքների պահպանման համար, քանի որ մարդն ուժեղ է իր ընտանիքով»:

Արփի ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԴԵՌ ՀԱՌՆԵԼՈՒ Է ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ՝ ԻՐ ԻՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՎ

Էջ 6 ←

Սա բազմաթիվ փաստերից մեկն է, որ Հայոց եկեղեցին ոչ միայն իր ավանդը ուներ Մայիսյան հերոսամարտերում, այլև Հայ Դատի ջախակիր լինելու գործում... Սրանք այն արժեքներն են, որոնք պետք դրվեին Հայոց նորանկախ պետության հիմքում: Պատահական չէ, որ Հայոց եկեղեցու մյուս իմաստուն Հայրապետը՝ Վազգեն Ա Վեհափառը, արդեն անկախ Հայաստանի խորհրդարանի առաջ ելույթ ունենալիս հնչեցրել էր այս բանաձևը. «...Մեր ժողովուրդը պետք է լավ ճանաչի ինքն իրեն, ուղիղ հասկանա իր հարազատ ազգայինը, և սրբությամբ՝ պահի, պահպանի ամբողջ ու անարատ ու աննվաճ այն, ինչ ստեղծվել և հորինվել է դարերի ընթացքում՝ մինչև մեր օրերը:

Մեկ ազգություն ենք, մեկ և անբաժան իբրև եկեղեցի մեկ կրոնական, քրիստոնեական հավատքով մեկ առաքելական սուրբ եկեղեցիով մեկ ազգային մշակույթով, մեկ մայր հայրենիքով, ահա մեր հավատամքը: Մեր բոլորիս նպատակը պետք է լինի ոչ թե ձախողեցնել, այլ հաջողությամբ պսակել արդարությունը:

Ինչպե՞ս ենք հասնելու Վազգեն Ա Վեհափառի ազգային իղծերի իրագործմանը, երբ մեզ պարտադրված այս ծանրագույն փորձությունների շրջանում թվում է անհնարին:

Հայրենաշինություն. ահա՛ հաջորդ կարևոր պատմական դասերից մեկը, որ մեզ է հղում Գարեգին Ա Սարգիսեան Ամենայն Հայոց կաթողիկոսը. «Ես մեծ հույսով, անկեղծ սպասումով կ'ուզեմ, որ այլևս հայրենասիրություն բառը նոր անուն մը առնե՛ հայրենաշինություն: Հայրենասիրությունը զգացումի հարց է, հայրենաշինությունը կեանքի, գործի հարց է: Եւ նույնիսկ Յիսուսն ինչ ըսաւ. «Եթէ ինձ էլ չէք հաւատում, գործերի՛ն հաւատացե՛ք»: Գործն է փորձաքարը ճշմարտության, ապրումներու հարազատութեան, վաւերականութեան եւ անկեղծութեան»:

...Հայոց հայրապետերը ապրել ու այս պատգամներն են սերունդներին հղել նույնքան դժվարին ժամանակներում, ինչ այսօր տեսնում ու ապրում ենք մենք: Եվ այս պատգամները մեզ սերունդներիս էին հղում էին ոչ միայն նրա համար, որովհետև լավատես էին: Նրանք մեծագույն ազգաճանաչներ էին, ամենամեծ տառապանքի և օրհասի ժամին կարողացան տեսնել ազգի հոգին և յուրաքանչյուր տող գրում էին վստահությամբ, որ հայ ազգը հարատևելու է, որովհետև ուրիշ ճանապարհ մեզ տրված չէ... Մայիսյան հերոսամարտերը դրա վկայությունն էին... Եվ, այո՛, պիտի հառնի Հայոց աշխարհը՝ իր իրական սահմաններով...

Հասմիկ ՊՈՐՈՍՅԱՆ